ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ

ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ

ՏԵՂԵԿԱՆՔ

2023 թվականին Ոստիկանության կողմից մարդու իրավունքների խախտման դեպքերի վերաբերյալ

ԶԼՄ մշտադիտարկման արդյունքների ամփոփում

2024 թ.

Norwegian Helsinki Committee

Տեղեկանքը պատրաստվել է «Ոստիկանության հետ հարաբերություններում քաղաքացիների իրավունքների պաշտպանության արդյունավետության բարձրացում» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվում է Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի կողմից Նորվեգիայի հելսինկյան կոմիտեի ֆինանսական աջակցությամբ:

Տեղեկանքում ներկայացված կարծիքները ՀՔԱ Վանաձորի գրասենյակինն են և հնարավոր է չհամապատասխանեն ֆինանսավորող կազմակերպության տեսակետներին:

Շապիկի նկարի աղբյուր՝ aravot.am կայք
Նկարագրություն՝ ոստիկանության ծառայողները ՀՀ կառավարության շենքի մոտ և երիտասարդ աղջիկ՝ կանգնած նրանց դիմաց

Կազմեց՝ Սառա Ղազարյան

Խմբագիր՝ Արթուր Սաքունց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 5

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 5

ԱՄՓՈՓԱԳԻՐ 7

Առաջարկություններ 12

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԿԶԲՈՒՆՔԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ 12

ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԿԶԲՈՒՆՔԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ 15

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՎԱՔՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԽԱԽՏՈՒՄԸ, ԲՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ 16

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ «ԶԱՆԳ» ՇԱՐԺՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ 19

ԱՌԱՆՑ ՏԱՐԲԵՐԱՆՇԱՆԻ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱԳՈՒՍՏՈՎ ԱՆՁԱՆՑ ՆԵՐԳՐԱՎՈՒՄԸ ՀԱՎԱՔՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ 21

ԽՈՇՏԱՆԳՄԱՆ ԴԵՊՔԵՐԸ 22

ԲՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ 23

ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐՈՒՄ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 24

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԿԻՆ ՇԵՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ 25

ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ 26

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՄԱՆ ԴԵՊՔԵՐԸ 27

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԸ ԵՎ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊՕՐԻՆԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 28

ՄԱՄՆԱՎՈՐ ԿՅԱՆՔԻ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ 29

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՉ ՄԻԱՏԵՍԱԿ, ԱՆԿԱՆԽԱՏԵՍԵԼԻ ՎԱՐՔԱԳԻԾԸ 29

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ԴԵՊՔԵՐԸ 30

ՊԱՐԵԿԱՑԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ 31

2023 Թ. ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ԴԵՊՔԵՐԻ ԹՎԱՅԻՆ ԱՄՓՈՓՈՒՄ 33

2023 թ. Ոստիկանության կողմից մարդու իրավունքների խախտմանը հանգեցրած անհատական բնույթի դեպքերի ամփոփում 37

2023 թ. հավաքների ընթացքում կամ դրանց մասնակցելու հետևանքով Ոստիկանության կողմից մարդու իրավունքների խախտմանը հանգեցրած դեպքերի ամփոփում 37

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՀՀ ՆԳՆ ՆԵՐՔԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ և ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆ ԱՌ ՆՈՅԵՄԲԵՐԻ 9, 2023 Թ. 39

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՀՀ ՆԳՆ ՆԵՐՔԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆ ԱՌ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 8, 2023 Թ. 40

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՀՀ ՆԳՆ ՆԵՐՔԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆ ԱՌ ՀՈՒՆՎԱՐԻ 16, 2024 Թ. 41

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2020 թ. ՀՀ կառավարությունը հաստատեց ՀՀ արդարադատության նախարարության մշակած «Հայաստանի Հանրապետության ոստիկանության բարեփոխումների ռազմավարությունը և դրանից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագիրը», որի նպատակը ժամանակակից մարտահրավերներին դիմակայող, մասնագիտացված բարեվարք և հարգանքի արժանի ոստիկանության ստեղծումն է: Ստեղծվեց վարչապետի գլխավորությամբ գործող Ոստիկանական բարեփոխումների համակարգող խորհուրդ, որում ներգրավված էին նաև քաղաքացիական հասարակության կազմակերպությունները՝ ի դեմս Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի (այսուհետ՝ ՀՔԱ Վանաձորի գրասենյակ), Իրազեկ քաղաքացիների միավորման և «Վարորդի ընկեր» իրավապաշտպան կազմակերպության:

Հասարակական կազմակերպությունների կողմից ի սկզբանե մտահոգություն ներկայացվեց համակարգային փոփոխությունների փոխարեն հատվածային բարեփոխման մոտեցման կապակցությամբ (մասնավորապես, պարեկային ծառայության ներդրման): Այնուամենայնիվ, նոր ծառայության ստեղծման գործում հասարակական կազմակերպությունները մեծ մասնակցություն և ներդրում ունեցան:

2023 թ. հունվարի 9-ին վարչապետ Նիկոլ Փաշինյանի առաջադրմամբ ՀՀ նորաստեղծ ներքին գործերի նախարարության (այսուհետ՝ ՆԳՆ) ղեկավար նշանակվեց ոստիկանապետ Վահե Ղազարյանը:

Հիշյալ հասարակական կազմակերպությունների կողմից օրինապահության, մարդու իրավունքների և ժողովրդավարության արժեքները ոտնահարողի նշանակումը նման բարձրաստիճան պաշտոնի գնահատվեց որպես ոստիկանության իրական, խորքային ու արժեքային բարեփոխում իրականացնելու ճանապարհի ամբողջական փակում, և 2023 թ. հունվարի 10-ին կազմակերպությունները դադարեցրին իրենց գործունեությունը Ոստիկանության բարեփոխումների համակարգող խորհրդում ու աշխատանքային խմբերում՝ համարելով այն անիմաստ:

2023 թ. ոստիկանության գործողությունների վերաբերյալ ԶԼՄ հրապարակումների մշտադիտարկումը նույնպես փաստում է հայտարարված բարեփոխումների ձախողման մասին: Ոստիկանության ծառայողների կողմից մարդու իրավունքների խախտման դեպքերը շարունակական և համակարգային բնույթ են կրում, մինչդեռ պատասխանատու մարմինների՝ այդ դեպքերը կանխելու, իսկ տեղի ունենալու դեպքում մեղավորներին պատասխանատվության ենթարկելու գործողությունները բացակայում են՝ խորացնելով անպատժելիության մթնոլորտը համակարգում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն տեղեկանքն ամփոփում է 2023 թ. Հայաստանում ոստիկանության ծառայողների կողմից մարդու իրավունքների խախտումներն ինչպես հավաքների և հանրային այլ

միջոցառումների ժամանակ, այնպես էլ անհատական դեպքերով: Խախտման նույն դեպքի վերաբերյալ մի քանի հրապարակումներ համադրվել են՝ որպես հավաստիության ճշգրտման մեթոդ:

Ոստիկանության ծառայողների կողմից քաղաքացիների իրավունքների խախտման դեպքերը հավաքագրելու նպատակով մշտադիտարկվել են 15 առցանց լրատվամիջոց (ընտրանքը կատարվել է 2015 թ.-ին), ինչպես նաև ՀՀ ոստիկանության պաշտոնական կայքէջը և Մարդու իրավունքների պաշտպանի ֆեյսբուքյան էջը[1]:

Դեպքերն առանձնացվել և վերլուծվել են լրատվամիջոցների տարածած տեղեկատվության հիման վրա, որի հավաստիության համար պատասխանատվություն են կրում տարածող լրատվամիջոցները: ՀՔԱ Վանաձորի գրասենյակը չի կատարել հրապակումներում ներկայացվող փաստերի ճշտում:

Արձանագրված դեպքերը բաժանվել են երկու պայմանական խմբի՝ հավաքների ժամանակ կամ դրանց մասնակցելու արդյունքում տեղի ունեցած դեպքեր և անհատական բնույթի դեպքեր: Հավաքների մեջ ներառվել են բոլոր հանրային միջոցառումները՝ ցույց, նստացույց, երթ և այլն:

Տեղեկանքում անձի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի խախտում են համարվել ոչ միայն անհիմն և ապօրինի բերման ենթարկելու դեպքերը, այլև բոլոր այն դեպքերը, երբ անձը թեև օրենքով սահմանված կարգով է բերման ենթարկվել ոստիկանության բաժին, սակայն այնտեղ պահվել է սահմանված 3 ժամից ավել:

Ոստիկանության կողմից մարդու իրավունքների խախտումները ներկայացված և դասակարգված են՝ հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրությամբ, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայով ամրագրված մարդու իրավունքների ցանկը: Առանձին խախտում է դիտարկվում մասնագիտական խմբերի (գլխավորապես լրագրողների) գործունեության խոչընդոտումը՝ ոստիկանության ծառայողների գործողությունների բովանդակությունը հնարավորինս հստակ փոխանցելու և տեսանելի դարձնելու նպատակով:

Իրավունքների վերաբերյալ դիտարկումներում ներառված են ինչպես ըստ կոնկրետ իրավունքի խախտման դեպքերը, այնպես էլ դիտարկվող իրավունքի խախտման հետ զուգորդված այլ իրավունքների խախտումները:

Սույն մեթոդաբանության արդյունավետությունն ապացուցվել է նաև արտակարգ և ռազմական դրությունների պայմաններում՝ ոստիկանության ծառայողների կողմից քաղաքացիների իրավունքների խախտումների ուսումնասիրության ժամանակ:

Հաշվի առնելով տեխնոլոգիական առաջընթացը, ուղիղ եթերների հնարավորությունը՝ լրատվամիջոցների հրապարակումները ծառայում են հուսալի սկզբնաղբյուր և

[1] Մշտադիտարկված լրատվամիջոցներն ու կայքերն են՝ www.aravot.am, www.armlur.am, www.galatv.am, www.azatutyun.am, www.1in.am, www.168.am, www.armtimes.am, www.hraparak.am, www.epress.am, www.lragir.am, www.ilur.am, www.news.am, www.hetq.am, www.a1plus.am, www.factor.am, www.police.am, https://www.facebook.com/profile.php?id=100069268237249

ոստիկանության գործողությունները հնարավորինս օբյեկտիվորեն գնահատելու արդյունավետ գործիք:

Այս դիտարկումը մեծապես վերաբերում է հավաքներին և այլ հանրային ակցիաներին: Նշենք սակայն, որ անհատական բնույթի դեպքերի դիտարկումը պակաս կարևոր չէ ոստիկանության ծառայողների կողմից մարդու իրավունքների հնարավոր խախտումները զսպելու և կանխարգելելու տեսանկյունից: Ըստ այդմ, չափազանց կարևոր է ԶԼՄ-ների դերակատարությունը նաև մարդու իրավունքների անհատական բնույթի դեպքերի լուսաբանման հարցում, ինչը կնպաստի հնարավոր չարաշահումները, խախտումները կանխելուն ու Հայաստանի քաղաքացիների ապահովվածության ու վստահության մակարդակը բարձրացնելուն:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

2020 թ.-ին հայտարարվեց ոստիկանության բարեփոխման մասին, ընդունվեց ռազմավարություն և գործողությունների ծրագիր, սակայն հռչակված բարեփոխումներին զուգահեռ ոստիկանական համակարգում աճում են անձանց խոշտանգման, բռնության, արժանապատվությունը նվաստացնելու դեպքերը, ինչպես նաև անպատժելիությունը: Մշտադիտարկման արդյունքները, ինչպես նաև ՀՔԱ Վանաձորի գրասենյակի արձանագրած դեպքերը ցույց են տալիս, որ ոստիկանության ծառայողների բացահայտ ահաբեկող, վախի մթնոլորտ ստեղծող ակնհայտ ապօրինի գործողությունների կիրառումը շարունակվում է: Ոստիկանության ծառայողների կողմից ոչ իրավաչափ գործողությունները հետևողականորեն պատշաճ արձագանք չեն ստանում, չեն քննվում կամ թողնվում են անհետևանք: Մեղավորները չեն նույնականացվում և պատասխանատվության չեն ենթարկվում: Օրինակ՝ բարձրաստիճան ոստիկանի կողմից 2023 թ. անչափահասի նկատմամբ բռնության դեպքի առնչությամբ գործ հարուցվեց միայն դեպքի տեսագրության՝ հանրությանը հասանելի դառնալուց հետո, ինչը, ինքնին, փաստում է համակարգում հանցագործությունները կոծկելու միտման և անպատժելիության աճի մասին: 2023 թ. նոյեմբերին որոշում կայացվեց «Եռաբլուրի գործով» ոստիկանների նկատմամբ քրեական հետապնդում չհարուցելու մասին՝ հանցակազմի բացակայության հիմքով:

Ոստիկանական համակարգում պատժելիության սկզբունքի անհամաչափ կիրառման մեկ այլ օրինակ է ենթադրյալ խոշտանգման դեպքով քրեական հետապնդման ենթարկվող ոստիկանների **նկատմամբ որպես խափանման միջոց պաշտոնավարման կասեցումը ընտրելը,** այն դեպքում, երբ, օրինակ, կալանք է կիրառվում հավաքների մասնակիցների, այդ թվում անչափահասների և ուսանողների նկատմամբ, կամ 0.48 գրամ քաշով «Մեթամֆետամին» տեսակի թմրամիջոց ունեցող անձի նկատմամբ: Փաստացի, անձնական օգտագործման համար 0.48 գրամ քաշով թմրամիջոց ունեցող անձը համարվում է ավելի վտանգավոր, քան անձին ենթադրյալ խոշտանգման ենթարկած իրավապահ համակարգի ծառայողը: Ավելին՝ հակաօրինական արարքները կարծես թե խրախուսվում են,

բռնություն գործադրող ոստիկանության ծառայողները ոչ միայն չեն հեռացվում համակարգից, այլև ունենում են ծառայողական առաջխաղացում:

2022 թ. ՀՔԱ Վանաձորի գրասենյակը 98 հրապարակումներում արձանագրված խախտումների քննության ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու հարցում էր ուղարկել ՀՀ ոստիկանություն: Տեղեկություն տրամադրվել էր 26 հրապարակման վերաբերյալ, իսկ 72 հրապարակման մասով ոստիկանությունում իրականացնում էին ուսումնասիրություններ՝ ծառայողական քննության հարցը լուծելու համար: 2023 թ. նոյեմբերի 7-ին կազմակերպությունը կրկին դիմել էր ՀՀ ՆԳՆ և նոյեմբերի 9-ին տեղեկացել, որ վերը նշված բոլոր 72 հրապարակումներով ընթանում է ծառայողական քննություն: 2023 թ. դեկտեմբերի 8-ին նախարարությունից տեղեկացրել են, որ ծառայողական քննության ընթացքը երկարաձգվել է ևս 30 օրով, իսկ 2024 թ հունվարի 16-ին տեղեկացրել են, որ նշված հրապարակումների կապակցությամբ իրականացված **ծառայողական քննության** արդյունքներով ձեռք բերված փաստաթղթերն ուղարկվել են ՀՀ գլխավոր դատախազություն, **դրա** ընթացքը կասեցվել է և որոշվել է **դրան անդրադառնալ հիշյալ դեպքով** իրավական գնահատականի վերջնական արդյունքներով:

ՀՀ ՆԳՆ պատասխաններից կարող ենք արձանագրել հետևյալը.

- ծառայողական քննությունները նախարարության ներքին անվտանգության և հակակոռուպցիոն վարչությունում նույնիսկ 2 տարի անց չեն ավարտվում
- նախարարության վերջին գրությունից պարզվում է, որ 72 հրապարակումով նշանակվել է ընդամենը մեկ ծառայողական քննություն, մինչդեռ այդ հրապարակումները վերաբերում են տարբեր բնույթի դեպքերին, տարբեր ժամանակահատվածներին:

2023 թ. ընթացքում միայն ԶԼՄ հրապարակումներով արձանագրվել է խոշտանգման 6 դեպք (չհաշված բաժիններում փաստաբանների, անչափահասների, ակումբներից բերման ենթարկվածների նկատմամբ բռնությունները): **Այս դեպքերը համակարգում անպատժելիության և խոշտանգման, ինչպես նաև քաղաքացիների նկատմամբ վատ ու արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի դեպքերի ոչ պատշաճ քննության, մեղավորներին չպատժելու վառ դրսևորումներն ու հետևանքն են:** Նշենք, որ ըստ ՀՀ ՆԳՆ տրամադրած տեղեկության՝ 523 տեսանկարահանող սարք է տեղադրված ՀՀ ՆԳՆ ոստիկանության 69 ստորաբաժանումների **շենքերի մուտքերի/ելքերի, հերթապահ մասերի տարածքներում**: Այսինքն, բաժինների սենյակներում տեսաձայնագրում չի իրականացվում, մինչդեռ, որպես կանոն, այդ սենյակներում են տեղի ունենում անձանց խոշտանգման, վատ վերաբերմունքի դեպքերը:

2023 թ. ոստիկանության ծառայողների գործողություններն բողոքի ցույցերի ընթացքում ուղեկցվել են

- անհիմն ու անհամաչափ ուժի կիրառմամբ,
- առանց իրավական հիմքերը ներկայացնելու անձանց ազատությունից զրկմամբ,

- քաղաքացիների առողջությանը վնասի պատճառմամբ,
- անչափահասների նկատմամբ ուժի կիրառմամբ և վերջիններիս ազատությունից զրկմամբ,
- լրագրողների գործունեության խոչընդոտմամբ,
- հավաքների վայրերում քաղաքացիական հագուստով և/կամ առանց որևէ տարբերանշանի անձանց ներգրավմամբ:

Արձանագրվել է ԱԺ պատգամավորի բերման ենթարկելու դեպք: Ոստիկանության կողմից նաև հատուկ միջոց է կիրառվել հավաքի մասնակիցների նկատմամբ, իսկ ոստիկանության բաժիններում հավաքի մասնակիցները ենթարկվել են բռնության, հաճախ զրկված են եղել իրավաբանական օգնություն ստանալու հնարավորությունից:

2023 թ. ընթացքում ոստիկանության ծառայողները հետևողականորեն խոչընդոտել են «Զանգ» շարժման խաղաղ ակցիաները և իրազեկման նախաձեռնությունները, արգելել վրան տեղադրել Մաշտոցի պուրակում և բռնի ուժի գործադրմամբ բերման են ենթարկել ակցիայի մասնակիցներին՝ ինչպես Ոստիկանությունն է նշում, ոստիկանության ծառայողի կողմից հնչեցված՝ վրանը չտեղադրելու վերաբերյալ պահանջը չկատարելու հիմքով: Հարկ է նշել, որ Մարդու իրավունքների պաշտպանը 2023 թ. նոյեմբերի 28-ին հրապարակել էր այդ հարցի առնչությամբ իր որոշումը՝ արձանագրելով, որ *հավաքների ազատության իրավունքը ներառում է նաև հավաքի ընթացքում ժամանակավոր շինություններ կամ վրան տեղադրելու հնարավորությունը* և հետևաբար *հավաքի մասնակիցների կողմից վրան տեղադրելը թույլ չտալուն ուղղված գործողությունների հետևանքով խախտվել է հավաքի մասնակիցների հավաքների ազատության իրավունքը:* Այնուամենայնիվ, ոստիկանության գործողություններում որևէ փոփոխություն չի արձանագրվել:

Հատկանշական է, որ «Զանգ» շարժման ակցիաների մասնակիցները փոքրաթիվ էին, իսկ ոստիկանության կողմից 12-13 անձի բերման ենթարկելն ինքնաբերաբար նշանակում էր հավաքի դադարեցում: Այսինքն ոստիկանության ծառայողների գործողություններն ուղղված էին ոչ թե հավաքի ընթացքում անկարգության և/կամ հասարակական կարգի խախտումների կանխմանը, այլ հենց հավաքի դադարեցմանը:

2023 թ. աննախադեպ դեպքերից էր **փաստաբանների նկատմամբ բռնությունը** ոստիկանության բաժիններում: ՀՔԱ Վանաձորի գրասենյակը 2015 թ.-ից իրականացնում է Ոստիկանության կողմից մարդու իրավունքների խախտման դեպքերի ԶԼՄ մշտադիտարկում, և 2023 թ. առաջին անգամ է արձանագրվել բռնության դեպք փաստաբանների նկատմամբ, ընդ որում՝ 3 նման դեպք: ՀՔԱ Վանաձորի գրասենյակը հայտարարություն է տարածել՝ դատապարտելով փաստաբանների և անչափահասների նկատմամբ ոստիկանության ծառայողների գործողությունները և պատասխանատուների անգործությունը:

2022 թ. առաջին անգամ էին արձանագրվել հավաքների ընթացքում բռնության և ազատությունից զրկելու դեպքեր **անչափահասների նկատմամբ**: Այդ տարի 10 օրվա ընթացքում բերման ենթարկվեց ավելի քան 15 անչափահաս: 2023 թ. անչափահասների

իրավունքների խախտումները ոչ միայն շարունակվեցին, այլև ավելի խորացան։ Մասնավորապես, եթե 2022 թ. արձանագրվել էին անչափահասների նկատմամբ անհամաչափ ուժի կիրառման և բերման ենթարկելու դեպքեր միայն հավաքների ընթացքում, ապա 2023 թ. բռնության դեպքեր են արձանագրվել նաև ոստիկանության բաժիններում։ Մեկ դեպքում էլ բարձրաստիճան ոստիկանը բռնություն է կիրառել հյուրանոցում աշխատող անչափահասի նկատմամբ, սակայն նրան մեղադրանք չի առաջադրվել «գործուն զղջալու հիմքով»։

ՀՀ ոստիկանությունը 2023 թ. հայտարարել էր **թմրամիջոցների դեմ պայքարի տարի**։ Այդ պայքարի շրջանակներում, սակայն, Հայաստան ուղարկվող մեծ խմբաքանակի (3 տոննա) թմրամիջոցները չեն առգրավվել Հայաստանի սահմանապահների ու ոստիկանության ծառայողների կողմից։ Միևնույն ժամանակ ոստիկանության ծառայողները ռեյդեր են կազմակերպել ակումբներ՝ բիրտ ու անհամաչափ ուժի գործադրմամբ աշխատակիցներին և այցելուներին պառկեցրել հատակին, բիրտ ուժ ու բռնություն կիրառել որևէ դիմադրություն ցույց չտվող անձանց նկատմամբ, սպառնացել զենքով, արդյունքում առգրավել ընդհանուր 1,95 գրամ քաշով «Մեթամֆետամին» և 5.87 գրամ հաստատուն քաշով «Մարիխուաննա» տեսակի թմրամիջոց։ Ավելին՝ մոտ 80 անձ բերման էր ենթարկվել ոստիկանության բաժիններ, որտեղ նրանք ենթարկվել են դաժան ծեծի և խուզարկվելու համար մերկացվել։

2023 թ. ընթացքում արձանագրվել են նաև օտարերկրացիների իրավունքների խախտումներ։ Դրանց հիմնական մասը վերաբերում էր Ռուսաստանի Դաշնության (այսուհետ՝ ՌԴ) կողմից Ռուսաստանի քաղաքականությունը քննադատող հրապարակումների համար հետախուզում հայտարարված անձանց։ Հայաստանի ոստիկանությունը ձերբակալել և/կամ փորձել էր ձերբակալել այդ անձանց։ Ռուս-ուկրաինական պատերազմից հետո Ռուսաստանի կողմից հետախուզվող 10-ից ավել քաղաքացի է այս խնդրով դիմել ՀՔԱ Վանաձորի գրասենյակ։

2020 թ. Հայաստանում մեկնարկեց պարեկային ծառայության ձևավորման գործընթացը։ Երևանում այն սկսեց գործել 2021 թ. հուլիսից, Շիրակի և Լոռու մարզերում՝ 2022 թ. ապրիլից։

Եթե նախորդ երկու տարիների ընթացքում պարեկների կողմից մարդու իրավունքների խախտման դեպքեր չէին արձանագրվել, ապա 2023 թ., բացի ոստիկանության այլ ստորաբաժանումների ծառայողների հետ պարեկների կողմից անձանց խոշտանգելու, նրանց նկատմամբ բռնություն գործադրելու դեպքերի, արձանագրվել է 6 դեպք, երբ պարեկները կանգնեցրել են մեքենան և անհարգալից են խոսել վարորդների հետ, նրանց նկատմամբ ֆիզիկական ուժ և բռնություն կիրառել, իսկ մեկ վարորդի հեռանալուց հետո հայհոյանքներ են հնչեցրել։

Արձանագրվել են նաև ոստիկանության կողմից լրագրողների՝ մասնագիտական գործունեությունը խոչընդոտելու դեպքեր, ոստիկանության ծառայողների անկանխատեսելի վարքագիծ միատեսակ իրավիճակներում, ավագանու նիստի անցկացմանը ոստիկանության

ներգրավման դեպք, որոնք մանրամասն ներկայացված են տեղեկանքի համապատասխան վերնագրերի ներքո։

Հատկանշական է, որ ոստիկանության ապօրինի գործողությունները, ինչպես և 2022 թ.-ին, շարունակաբար գովաբանվել են պաշտոնատար անձանց կողմից։ Օրինակ՝ ՀՀ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը 2023 թ. սեպտեմբերի 24-ին հանրային հեռուստատեսության եթերում հայտարարել է, որ «*իշխանությունը, ոստիկանությունը լավ են անում, ճիշտ են անում, որ բիրտ ուժ են կիրառում ցուցարարների նկատմամբ*»: 2023 թ. նոյեմբերին ՀՀ ներքին գործերի նախարար Վահե Ղազարյանը, Ազգային ժողովում անդրադառնալով Ոստիկանության կողմից ուժի կիրառման դեպքերին, նշել է, որ «*Ոստիկանությունը երբևիցե նման գրագետ ձևով չի աշխատել*»:

Բացի դրանից՝ լրագրողների՝ անչափահասին խեղդելու հնարքով բերման ենթարկելու դեպքի արձանագրմանը և դրա վերաբերյալ պնդմանը ոստիկանապետ Արամ Հովհաննիսյանը պատասխանել է՝ «Դա ձեր երևակայությունն է, որ խեղդում էր»:

Հարկ ենք համարում ընդգծել, որ Ոստիկանության ծառայողների՝ փաստաբաններին բռնության ենթարկելու, անձանց խոշտանգելու, մերկացնելու, արժանապատվությունը նվաստացնելու, հարվածելով հատակին տապալելու գործողությունները որևէ կերպ «գրագետ», ինչպես որակում է ՀՀ ներքին գործերի նախարարը, գնահատվել չեն կարող, ինչպես և չեն կարող արժանանալ գովասանքի. դրանք մարդու իրավունքների կոպիտ խախտումներ են: Բարձրաստիճան պետական պաշտոնյաների՝ իրականությանը չհամապատասխանող գնահատականները չեն նպաստում իրավապահ համակարգի բարեփոխմանը և խաթարում են իրավապահ համակարգում պատասխանատվության և հաշվետվողականության սկզբունքների պահպանումը, հանրային վստահության ձևավորումը թե՛ իրավապահ մարմինների, թե՛ նման գնահատականներ հնչեցնողների հանդեպ: Ավելին, նման գնահատականները նպաստում են նաև անպատժելիության խորացմանը:

Անդրադառնալով մշտադիտարկման թվային արդյունքներին՝ նշենք, որ 2023 թ. ԶԼՄ հրապարակումների հիման վրա արձանագրվել է մարդու իրավունքների խախտման **112 դեպք**: Նախորդ տարվա համեմատությամբ դեպքերի թիվը նվազել է **43.7 %-ով (կամ 87 դեպքով)**: Միևնույն ժամանակ համակարգում մարդու իրավունքների խախտման դեպքերի շարունակական և համակարգային բնույթի մասին է փաստում արձանագրված անհատական բնույթի դեպքերի թվի աճը: 2023 թ. Հրապարակումների մշտադիտարկմամբ արձանագրվել է ոստիկանության ծառայողների կողմից մարդու իրավունքների խախտմանը հանգեցրած 51 անհատական բնույթի դեպք: Դա կազմում է խախտումների ընդհանուր թվի **45.5 %-ը՝ արձանագրելով 36 % աճ նախորդ տարվա համեմատ (19 դեպք 2022 թ.-ին)**: Հատկանշական է, որ տոկոսային հարաբերակցությամբ 2023 թ. անհատական բնույթի խախտումներն ամենաբարձրն են 2020-2023 թթ. ընթացքում:

Կանոնավոր աճ են արձանագրել բռնության, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու, խտրականությունից զերծ մնալու իրավունքների խախտման դեպքերը:

Այսպիսով, կարող ենք եզրահանգել, որ ոստիկանական համակարգը, չնայած հռչակված բարեփոխման ռազմավարության, փաստացի այդպես էլ արմատական փոփոխության չենթարկվեց, և ծառայողներն այդպես էլ խաղաղ հավաքների ազատության իրավունքի ապահովման հմտություններ ձեռք չբերեցին: Ավելին, ոստիկանության ծառայողների գործողությունները, գլխավորապես պայմանավորված համակարգում անպատժելիության մթնոլորտով, ավելի ու ավելի կամայական ու հակաօրինական բնույթ են ստանում, իսկ իրավապահ համակարգի պարզաբանումներն ու մեկնաբանություններն ուղղված են պաշտոնատար անձանց և ծառայողներին արդարացնելուն, այլ ոչ թե մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի վարքագծի ձևավորմանը:

Առաջարկություններ

- Երաշխավորել խոշտանգման դեպքերի ժամանակին ու պատշաճ քննությունը, մեղավորներին պատասխանատվության ենթարկելը
- Ապահովել ոստիկանության ծառայողների կողմից բռնության բոլոր դեպքերով թափանցիկ քննություններ նախաձեռնելու, մեղավորներին բացահայտելու և պատասխանատվության ենթարկելու գործուն մեխանիզմ
- Ապահովել տեսաձայնագրում ոստիկանության բոլոր բաժինների միջանցքներում, սենյակներում՝ երաշխավորելով անձանց՝ խոշտանգումներից կամ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու բացարձակ իրավունքը
- Երաշխավորել խաղաղ հավաքներ իրականացնող քաղաքացիների իրավունքների իրացումը՝ հավաքների ազատության իրավունքի միջազգային չափանիշներին համապատասխան
- Զերծ մնալ առանց իրավական հիմքի անձանց բերման ենթարկելու վարքագծից:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

2015 թ.-ից կազմակերպության կողմից իրականացվող մշտադիտարկման արդյունքները փաստում են իրավապահ համակարգում ոստիկանության ծառայողների ոչ իրավաչափ, հակաօրինական գործողությունների նկատմամբ պատասխանատվության ինստիտուտի անարդյունավետության, քրեական և ծառայողական քննությունների վերաբերյալ ոչ պատշաճ հաշվետվողականության բացակայության մասին: Մասնավորապես.

- 2023 թ. ոստիկանության կողմից անձանց խոշտանգելու և/կամ բռնության ենթարկելու և այդ կապակցությամբ քննություն հարուցելու վերաբերյալ պաշտոնական

հրապարակումները գրեթե բացակայում են[2]: Եզակի դեպքերից է Ազգային անվտանգության ծառայության (այսուհետ՝ ԱԱԾ)՝ ՆԳՆ ոստիկանների կողմից խոստովանություն ստանալու համար խոշտանգում կատարելու դեպքի բացահայտումը: Ենթադրյալ խոշտանգողների **նկատմամբ, սակայն, որպես խափանման միջոց է ընտրվել պաշտոնավարման կասեցումը**: Միևնույն ժամանակ, օրինակ, կալանք խափանման միջոց է կիրառվել հավաքների մասնակիցների նկատմամբ, կամ «Բան» ակումբից թմրամիջոց գործածելու համար ոստիկանության բաժիններ բերված 37 անձանցից մեկին ներկայացվել է մեղադրանք թմրամիջոցի խոշոր չափերի իրացման հիմքով և կիրառվել կալանք (6 ամիս հետո կալանքի ձևով խափանման միջոցը փոխարինվել է տնային կալանքով): Այսինքն, անձնական օգտագործման համար 0.48 գրամ քաշով թմրամիջոց ունեցող անձը համարվում է ավելի վտանգավոր, քան անձին ենթադրյալ խոշտանգման ենթարկած պետական պաշտոն զբաղեցնող իրավապահ համակարգի ծառայողը: Բացի դրանից՝ ոստիկանության ծառայողներն անձի մոտ հայտնաբերել էին 0.48 գրամ քաշով «Մեթամֆետամին», իսկ ակումբից՝ 1,47 գրամ քաշով «Մեթամֆետամին» և 5,3 գրամ քաշով «Մարիխուանա» տեսակների թմրամիջոցներ՝ դրանք նույնպես վերագրելով նշյալ անձին[3]:

- 2021 թ. ՀՔԱ Վանաձորի գրասենյակն անդրադարձել էր Լոռու մարզի Մարց գյուղում ոստիկանության ծառայողների ապօրինություններին և բռնություններին, հանցագործության մասին հաղորդում ներկայացրել: Կազմակերպությունը շարունակել է զբաղվել այդ գործով 2022 և 2023 թթ.: Մինչդեռ առաջընթաց չկա, ոստիկանական անպատժելիությունը ՀՀ-ում դեռևս չի հաղթահարվել. խոշտանգում եղել է, բայց խոշտանգողին ԱԱԾ-ն չի գտնում:
- 2022 թ. հուլիսին այն ժամանակ ոստիկանապետ Վահե Ղազարյանի հրամանով բաժիններում տեղադրված տեսախցիկներն անջատվեցին: Դրան հաջորդող տարում ոստիկանության բաժիններում արձանագրվեցին անձանց խոշտանգելու, անչափահասների և փաստաբանների նկատմամբ բռնություն գործադրելու, անձանց մերկացնելու, արժանապատվությունը նվաստացնելու դեպքեր: *Հիշեցնենք, որ 2019 թ. դեկտեմբերին «Ոստիկանության մասին» օրենքում կատարվեց փոփոխություն, որով «Մարդու իրավունքների պաշտպանության, խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի հնարավոր դեպքերի կանխարգելման և*

[2] 2020 թ.-ից Հատուկ քննչական ծառայության կայքում կտրուկ կրճատվեց ոստիկանության ծառայողների կողմից բռնություն կիրառելու և խոշտանգման ենթադրյալ դեպքերի վերաբերյալ հրապարակումների թիվը, ինչին անդրադարձել ենք մեր 2020 և 2021 թթ. զեկույցներում

[3] ՀՔԱ Վանաձորի գրասենյակն անդրադաձել է թմրամիջոցների մանր չափերի սահմանման անհամաչափության խնդրին իր՝ «Թմրամիջոցների գործածման, թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառության կանխարգելման ոլորտի բաղաքականության գանահատում» վերտառությամբ զեկույցում:

բացահայտման նպատակով ոստիկանության ստորաբաժանումների վարչական շենքերի մուտքերն ու ելքերը կահավորվում են տեսագրող, իսկ ոստիկանության ստորաբաժանումների վարչական շենքերում հարցաքննության համար օգտագործվող տարածքները (աշխատասենյակները)՝ տեսաձայնագրող համակարգերով»: Տեսախցիկները տեղադրվել էին Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ:

2023 թ. մարտի 1-ին Ներքին գործերի նախարարը հայտարարեց, որ ոստիկանության բարեփոխումների շրջանակում ոստիկանության բոլոր բաժիններում տեղադրվելու են տեսախցիկներ: Համաձայն ՀՀ ՆԳՆ ոստիկանության կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության 2024 թ. հունվարի 26-ին տրամադրած տեղեկության՝ 523 տեսանկարահանող սարք է տեղադրված ՀՀ ՆԳՆ ոստիկանության 69 ստորաբաժանումների **շենքերի մուտքերի/ելքերի, հերթապահ մասերի տարածքներում**: Ինչպես նշվում է, միայն **վարչական շենքերի մուտքերին և ելքերին** տեղադրված տեսագրող համակարգերի միջոցով է իրականացվում անընդհատ տեսագրություն և պահպանվում են երեք ամիս:

Պատասխանից կարող ենք եզրակացնել, որ բաժինների սենյակներում տեսաձայնագրում չի իրականացվում, մինչդեռ, որպես կանոն, այդ սենյակներում են տեղի ունենում անձանց խոշտանգման, վատ վերաբերմունքի դեպքերը: Բացի դրանից՝ միայն մուտքերի/ելքերի տեսագրությունն է անընդհատ իրականացվում, ինչից կարող ենք ենթադրել, որ հերթապահ մասերի տեսագրող սարքերը կարող են ցանկացած պահի անջատվել:

- 2023 թ. նոյեմբերին որոշվեց, որ «Եռաբլուրի գործով» ոստիկանների նկատմամբ քրեական հետապնդում չի հարուցվի հանցակազմի բացակայության հիմքով: *Հիշեցնենք, որ 2022 թ. սեպտեմբերի 21-ին, ոտնահարելով օրինականության բոլոր նորմերը, ոստիկանության ծառայողները, բռնի ուժ կիրառելով, արժանապատվությունը նվաստացնող ձևով բերման ենթարկեցին Եռաբլուրում գտնվող զոհված զինծառայողների հարազատներին: Փաստի առթիվ հարուցված քրեական գործով տուժող էր ճանաչվել 20 անձ, և մեկ տարի անց գործը կարճվում է՝ հանցակազմի բացակայության հիմքով:*
- Անպատժելիության և խտրականության մեկ այլ դեպք կապված է ՀՀ Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանի հետ: 2023 թ. ապրիլի 2-ին վերջինս Երևանի կենտրոնում՝ Կասկադում, թքել է իրեն դավաճան անվանած քաղաքացու աչքին: Ընդ որում, ՀՀ ԱԺ նախագահի թիկնապահները բռնել էին ՀՀ քաղաքացու ձեռքերը, նա մոտեցել է, հայհոյանք հնչեցրել քաղաքացու հասցեին և հետո թքել քաղաքացու աչքին:

  Հատկանշական է, որ ոստիկանության բաժանմունք տարել են միայն ՀՀ քաղաքացուն, մինչդեռ ՀՀ ԱԺ նախագահի արարքը խուլիգանության դրսևորում է: Այսինքն, ոստիկանության ծառայողները ոչ միայն ակնհայտ խուլիգանական արարքն անտեսել են, այլև նույնիսկ միջադեպի մասնակից երկու կողմին չեն հրավիրել ոստիկանության

բաժին՝ դեպքի հանգամանքները պարզելու համար: Այսինքն, Ոստիկանության ծառայողներն անգործություն են ցուցաբերել և օրենքով սահմանված գործառույթները չեն իրականացվել՝ արարքի քննության ուղղությամբ:

ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԿԶԲՈՒՆՔԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

2022 թ. ՀՔԱ Վանաձորի գրասենյակը 98 հրապարակումներում արձանագրված խախտումների քննության ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու հարցում էր ուղարկել ՀՀ ոստիկանություն: Ի պատասխան ՀՀ ոստիկանության ներքին անվտանգության վարչությունից 2022 թ. դեկտեմբերի 29-ին տրամադրվել է 26 հրապարակման վերաբերյալ տեղեկություն: Մյուս 72 հրապարակումների վերաբերյալ, ըստ Ոստիկանության, իրականացվում էին ուսումնասիրություններ՝ ծառայողական քննության հարցը լուծելու համար[4]:

2023 թ. նոյեմբերի 7-ին կազմակերպությունը կրկին դիմել էր ՀՀ ՆԳՆ և նոյեմբերի 9-ին տեղեկացել, որ վերը նշված բոլոր 72 հրապարակումներով ընթանում է ծառայողական քննություն: 2023 թ. դեկտեմբերի 8-ին նախարարությունից տեղեկացրել են, որ ծառայողական քննության ընթացքը երկարաձգվել է ևս 30 օրով, իսկ 2024 թ հունվարի 16-ին տեղեկացրել են, որ նշված հրապարակումների կապակցությամբ իրականացված **ծառայողական քննության** արդյունքներով ձեռք բերված փաստաթղթերն ուղարկվել են ՀՀ գլխավոր դատախազություն, **դրա** ընթացքը կասեցվել է և որոշվել է **դրան անդրադառնալ հիշյալ դեպքով** իրավական գնահատականի վերջնական արդյունքներով:

ՀՀ ՆԳՆ պատասխաններից կարող ենք արձանագրել հետևյալը.

- ծառայողական քննությունները նախարարության ներքին անվտանգության և հակակոռուպցիոն վարչությունում 2 տարի անց չեն ավարտվել
- նախարարության գրությունից հասկացվում է, որ 72 հրապարակումով նշանակվել է ընդամենը մեկ ծառայողական քննություն, մինչդեռ այդ հրապարակումները վերաբերում են տարբեր բնույթի դեպքերին, տարբեր ժամանակահատվածներին:

Նշենք նաև, որ ՀՀ ՆԳՆ նախարարության Ռազմավարական պլանավորման քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչության պետ Արմեն Մկրտչյանը վստահեցրել է ոստիկանության թափանցիկ և հաշվետվողական աշխատանքի մասին, մինչդեռ, օրինակ, 2023 թ. ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ուղարկած 3 հարցումներից երկուսին ՆԳՆ-ն լիարժեք չի պատասխանել, մեկ այլ հարցմանը պատասխանել է 26 օր անց:

[4] ՀՀ ոստիկանության ներքին անվտանգության վարչության պատասխանն ամբողջությամբ տե՛ս Ոստիկանության կողմից մարդու իրավունքների խախտման դեպքերի վերաբերյալ 2022 թ. տեղեկանքում

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՎԱՔՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԽԱԽՏՈՒՄԸ, ԲՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

2023 թ. առաջին կիսամյակում Հայաստանում հավաքները, որպես կանոն, չեն խոչընդոտվել, մինչդեռ երկրորդ կիսամյակում ակցիաների ժամանակ ոստիկանության ծառայողների գործողությունները կրել են համատարած կամայական, ոչ իրավաչափ բնույթ, անձանց բերման են ենթարկել առանց որևէ իրավական հիմք ներկայացնելու: Բերման են ենթարկվել մայթերով քայլող, ակցիաներին չմասնակցող անձինք: Խոչընդոտվել են խաղաղ իրազեկման արշավները, առգրավվել ակցիաների ատրիբուտները:

Հատկանշական է ոստիկանության ծառայողների ներգրավվածությունը՝ պայմանավորված հավաքի անցկացման վայրով: Օրինակ՝ Միավորված ազգերի կազմակերպության գրասենյակի, Եվրոպական միության պատվիրակության մոտ անցկացվող ակցիաները որևէ կերպ չեն խոչընդոտվել: Ոստիկանական ուժերը կենտրոնացված են եղել ՀՀ կառավարության նստավայրի առջև:

Ոստիկանության ծառայողների ոչ իրավաչափ գործողությունները հատկապես համատարած ու զանգվածային բնույթ են կրել 2023 թ. սեպտեմբերի 19-ին Ադրբեջանական զինված ուժերի կողմից Արցախի նկատմամբ լայնածավալ հարձակման և ՀՀ իշխանությունների կողմից չմիջամտելու մասին հայտարարությունից հետո: Երևանում, իսկ մի քանի օր անց նաև Հայաստանի այլ բնակավայրերում ծավալվել էին բողոքի ցույցեր և քաղաքացիական անհնազանդության ակցիաներ, որոնց մասնակիցները պահանջում էին իշխանության հրաժարականը:

Առաջին իսկ օրվանից պարբերաբար բախումներ էին տեղի ունենում բողոքի ակցիաների մասնակիցների և ոստիկանության ծառայողների միջև: ԶԼՄ մշտադիտարկման արդյունքները փաստում են ոստիկանության կողմից անհամաչափ ուժի, անձանց անհիմն բերման ենթարկելու, առողջությանը վնաս պատճառելու դեպքերի մասին: Ավելին՝ ոստիկանությունը սեպտեմբերի 19-ի երեկոյան կառավարության շենքի մոտ հավաքված ցուցարարների նկատմամբ հատուկ միջոց է կիրառել՝ **առանց նախազգուշացման**: Ցուցարարների ուղղությամբ լուսաձայնային նռնակներ են նետվել, ինչի հետևանքով ցուցարարներից ոմանք տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ են ստացել (նրանցից մեկի ոտքերն են վնասվել, մեկ անձի՝ դեմքը):

Նշենք, որ հատուկ միջոցներ գործադրելու կարգի համաձայն՝ «Ոստիկանության ծառայողը հատուկ միջոցներ գործադրելուց առաջ պարտավոր է նախազգուշացնել դրանք գործադրելու մասին՝ բավարար ժամանակ տրամադրելով օրինական պահանջները կատարելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանց գործադրման հապաղումն անմիջական սպառնալիք է ստեղծում քաղաքացիների կամ ոստիկանության ծառայողի կյանքին ու առողջությանը, կամ կարող է առաջացնել այլ ծանր հետևանքներ, կամ երբ տվյալ իրավիճակում այդպիսի նախազգուշացումն անհնար է»:

Սեպտեմբերի 19-ին Հանրապետության հրապարակում ոստիկանների գործողությունների հետևանքով ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Գեղամ Մանուկյանը բթի կոտրվածք էր ստացել:

Սեպտեմբերի 19-ին մեծ թվով քաղաքացիներ հավաքվել էին Հայաստանում ՌԴ դեսպանատան դիմաց՝ կոչ անելով ՌԴ իշխանություններին՝ քայլեր ձեռնարկել՝ դադարեցնելու Ադրբեջանի ցեղասպան գործունեությունը: Նրանք փակել էին դեսպանատան ելքերն ու մուտքերը՝ պահանջելով Ռուսաստանի դիվանագետներից պատասխանել, թե որն է ռուս խաղաղապահների առաքելությունը Արցախում, ինչով են զբաղված նրանք, երբ իրենց աչքի առաջ մանկահասակ երեխաներ են սպանվում:

Սեպտեմբերի 19-ի լույս 20-ի գիշերը ոստիկանությունը ցրել էր Հայաստանում ՌԴ դեսպանատան մոտ ցույցը: Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի տարբեր հոդվածներով նախատեսված արարքների համար ՌԴ դեսպանատան մոտից բերման էր ենթարկվել 5 անձ:

Սեպտեմբերի 21-ին ոստիկանները բիրտ ուժի կիրառմամբ կրկին բերման են ենթարկել ցուցարարներին, հատկապես այն վայրերում, որտեղ նրանց թիվը քիչ էր: Տեսանյութում երևում է, թե ինչպես են ոստիկանության տասնյակ ծառայողները Մաշտոցի պողոտայից բերման ենթարկում երիտասարդին՝ բռունցքներով դաժանորեն հարվածելով գլխին և մարմնի տարբեր հատվածներին:

Սեպտեմբերի 22-ին անհնազանդության ակցիաները շարունակվել են, ոստիկանության ծառայողներն էլ շարունակել են իրենց կամայական և ոչ համաչափ գործողությունները: Տեսագրության 8:00-8:30 րոպեներին երևում է, թե ինչպես են կարմիր բերատավորները տիկնոջ հասցեին ասում **"սրան բռնեք, գցեք ավտոն, է"**:

Սեպտեմբերի 25-ին անհնազանդության ակցիաների ժամանակ ֆիզիկական ուժի գործադրմամբ բերման է ենթարկվել պատգամավոր Թադևոս Ավետիսյանը:

Հիշեցնենք, որ ԱԺ պատգամավորներն օգտվում են անձեռնմխելիությունից: Նրանք չեն կարող զրկվել ազատությունից, և ինչպես նրանց բերման ենթարկելը կամ դրա փորձը չեն կարող հիմնավոր լինել, այնպես էլ նրանց նկատմամբ այդ ընթացքում ուժի գործադրումը չի կարող ներկայացվել որպես անհրաժեշտ ու համաչափ միջոց: Այսինքն, ոստիկանության գործողություններն ակնհայտ հակաօրինական ու ոչ իրավաչափ էին:

Այդ օրերի ընթացքում արձանագրվել են ոստիկանության ծառայողների կողմից անձանց ծեծի ենթարկելու մի շարք դեպքեր, անկանխատեսելի վարքագիծ և ոչ միատեսակ մոտեցում: Մասնավորապես՝ սեպտեմբերի 20-25-ը անհնազանդության ակցիաների մասնակիցները փակել են Երևանի տարբեր փողոցները, սակայն ոստիկանության ծառայողները մի դեպքում բռնի ուժի գործադրմամբ բացել են փողոցը, մեկ այլ դեպքում ընդհանրապես չեն միջամտել: Օրինակ՝ 2023 թ. սեպտեմբերի 21-ին մի խումբ ցուցարարներ աղբի ամաններով և նստարաններով փակել են Մաշտոցի պողոտա-Ամիրյան փողոցների խաչմերուկը: Ոստիկանության ծառայողները չեն փորձել ցրել ցուցարարներին և բացել

ճանապարհը, մինչդեռ, օրինակ՝ սեպտեմբերի 25-ին կարմիր բերետավորները բերման են ենթարկել ոչ միայն փողոցը փակած, այլ մայթերին կանգնած քաղաքացիներին:

Ոստիկանության ծառայողներն ուսանողների ձերբակալումներ են իրականացրել առանց ուսանողներին որևէ պատճառ ներկայացնելու, գործադրել են անհամաչափ ուժ:

Իրավապաշտպան Զարուհի Հովհաննիսյանը ֆեյսբուքյան իր էջում անդրադարձել է ակցիաների ընթացքում կալանավորված անձանց իրավունքներին՝ գրելով. «*Նուբարաշեն ՔԿՀ-ում այժմ հանրային բողոքների և ակցիաների ընթացում կալանավորված 26 անձ կա, նրանց մեծ մասը ուսանողներ են, որոնք դուրս են մնում կրթությունից, հաղորդակից են դառնում բանտային կյանքին, ինչը, վստահաբար, վնասակար ազդեցություն է ունենալու*»: Այսինքն, իրավապահ համակարգը, ոչ միայն չի երաշխավորում անձանց հավաքների ազատության, անձնական անձեռնմխելիության, արդար դատաքննության իրավունքները, այլև խախտում է նրանց կրթության իրավունքը:

Ոստիկանությունը դիմել է նաև սպառնալիքների: Մասնավորապես՝ ՀՅԴ անդամ Գերասիմ Վարդանյանը ֆեյսբուքյան իր էջում գրել էր, որ 2023 թ. սեպտեմբերի 19-ին Հանրապետության հրապարակի ցույցից տուն վերադառնալուց հետո տնից բերման են ենթարկվել ՀՅԴ Արարատ մարզային կոմիտեության նախագահ Կարեն Արամայիսյանը և մարզային կոմիտեության անդամ Անդրանիկ Ներսիսյանը: Ըստ գրառման՝ նրանց բերման էին ենթարկել հորդորելու ու նախազգուշացնելու, որ հանկարծ չմասնակցեն ու չխառնվեն իշխանությունների դեմ տեղի ունեցող բողոքի գործողություններին, այլապես՝ տղերքի համար վատ կլինի:

Խոչընդոտվել է նաև բերման ենթարկվածների՝ բաժիններում ժամանակին ու պատշաճ իրավաբանական աջակցության տրամադրումը: Քաղաքացիները ոստիկանության բաժիններում նաև դաժանաբար ծեծի են ենթարկվել: Մի խումբ փաստաբաններ հայտարարություն էին տարածել՝ նշելով, որ գրեթե բոլոր ձերբակալված անձինք թե՛ ձերբակալման պահին և թե՛ ոստիկանության համապատասխան բաժինների ճանապարհին ՆԳՆ ոստիկանության աշխատակիցների կողմից ենթարկվել են դաժան ծեծի և խոշտանգումների, ինչն ուղեկցվել է այդ անձանց պատիվն ու արժանապատվությունը վիրավորող սեռական բնույթի հայհոյանքներով և սպառնալիքներով:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը 2023 թ. սեպտեմբերի 23-ին հանդես է եկել հայտարարությամբ՝ դատապարտելով Ոստիկանության ոչ համարժեք արձագանքն անհնազանդության ակցիաներին, անհամաչափ և ոչ իրավաչափ ուժի կիրառումը:

Սեպտեմբերի 20-26-ը ոստիկանության բաժիններ բերման է ենթարկվել անհնազանդության ակցիաների 529 մասնակից, կալանավորվել՝ 37, ձերբակալվել՝ 64 անձ:

Նշենք, որ կալանք է կիրառվել մեկ դեպքում անչափահասի, մեկ դեպքում էլ երկու անչափահաս երեխաների միայնակ մոր նկատմամբ:

Ոստիկանությունը խոչընդոտել է նաև միանձնյա բողոքները: 2023 թ. սեպտեմբերի 19-ին Ադրբեջանի հարցերով փորձագետ Գառնիկ Դավթյանը Հանրապետության հրապարակի կենտրոնական հատվածում՝ գորգի վրա փորձել է իրականացնել «Արյուն՝ հանուն

աթոռապաշտպանության» սոցիալական-տեղեկատվական իրազեկման ակցիան: Ոստիկաններից մեկն ասել է, որ չի կարող նշված տեղում բողոքի ցույց կամ իրազեկման գործողություններ իրականացվել: Միայնակ ցուցարարի՝ հիմնավորելու պահանջին ի պատասխան նշվել է, որ գորգը երկրի խորհրդանիշն է, մինչդեռ ըստ ցուցարարի՝ այդտեղ համերգներ են անցկացվում ու դա սիմվոլի խախտում չի համարվում: Արդյունքում նրան ուժով հեռացրել են Հանրապետության հրապարակից՝ չներկայացնելով դրա համար համապատասխան իրավական հիմք:

Թվերը, ինչպես նաև ազատությունից զրկելու որոշումները, բաժիններում անձանց խոշտանգելու, նվաստացնելու վերաբերյալ տեղեկությունները թույլ են տալիս եզրահանգելու, որ ոստիկանությունը վախի մթնոլորտ ձևավորելու նպատակ է հետապնդում:

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ «ԶԱՆԳ» ՇԱՐԺՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ

2023 թ. օգոստոսին «Քաղաքացու որոշում» կուսակցության անդամները[5] Մաշտոցի պուրակում ցանկացել են վրան տեղադրել՝ հանրային քննարկում և հավաք իրականացնելու համար: Մի քանի օր շարունակ կուսակցության անդամները բերման են ենթարկվել Ոստիկանության բաժին՝ վրան տեղադրելու համար կամ, ինչպես Ոստիկանությունն է նշում, Ոստիկանության ծառայողի կողմից հնչեցված՝ վրանը չտեղադրելու վերաբերյալ պահանջը չկատարելու հիմքով:

2023 թ. սեպտեմբերի 19-ին Արցախի նկատմամբ Ադրբեջանի լայնածավալ ագրեսիայի և Արցախի հայաթափումից հետո 2023 թ. նոյեմբերից «Զանգ» շարժման ներկայացուցիչները պարբերաբար հավաքներ, երթեր են իրականացրել Երևանում՝ իրենց բողոքն արտահայտելով գործող իշխանության քաղաքականության դեմ: Ոստիկանության

[5] 2023 թ. օգոստոսից հետո դադարեցնելով իրենց անդամությունը նշյալ կուսակցությանը՝ դրա անդամները ձևավորեցին «Արժանապատվության շարժում» նախաձեռնությունը, որը հետագայում անվանափոխվեց «Զանգ» շարժման

ծառայողները խոչընդոտել են շարժման կազմակերպած բոլոր հավաքները՝ ուժի գործադրմամբ բերման ենթարկելով մասնակիցներին։

Շարժման անդամներն իրենց ակցիաների, երթերի խորհրդանիշ էին ընտրել վրանը, որը ներկայացնում էին որպես տան, պետության խորհրդանիշ, որն իրենք պաշտպանում են։ Ակցիաները հիմնականում անցկացվում էին Մաշտոցի պուրակում, որտեղ էլ մասնակիցները փորձում էին տեղադրել, մի քանի դեպքում տեղադրել են վրանը։ Ոստիկանության ծառայողները կամ թույլ չեն տվել վրանի տեղադրումը, կամ տեղադրված վրանը հանել են, բռնի ուժի գործադրմամբ բերման ենթարկել պուրակում խաղաղ ակցիա իրականացնողներին, առգրավել վրանը։ 2023 թ. նոյեմբերի 27-ին ոստիկանության ծառայողները «Զանգ» շարժման նախաձեռնած իրազեկման ակցիայի մասնակիցների ձեռքից ուժի գործադրմամբ խլել ու ոստիկանություն են տարել հավաքի պարտադիր ատրիբուտը՝ բարձրախոսը, և հրաժարվել վերադարձնել։

Նշենք, որ Մարդու իրավունքների պաշտպանը 2023 թ. նոյեմբերի 28-ին հրապարակել է որոշում՝ արձանագրելով, որ *հավաքների ազատության իրավունքը ներառում է նաև հավաքի ընթացքում ժամանակավոր շինություններ կամ վրան տեղադրելու հնարավորությունը* և հետևաբար *հավաքի մասնակիցների կողմից վրան տեղադրելը թույլ չտալուն ուղղված գործողությունների հետևանքով խախտվել է հավաքի մասնակիցների հավաքների ազատության իրավունքը։* Որոշումը կայացվել էր 2023 թ. օգոստոսի 16-ին ՀՀ քաղաքացի Սուրեն Սահակյանի («Քաղաքացու որոշում» կուսակցության այդ ժամանակվա անդամ)՝ ոստիկանության ծառայողների կողմից վրան տեղադրելը խոչընդոտելու և իրենց՝ հավաքների ազատության իրավունքը խախտելու մասին ահազանգից հետո։ Այնուամենայնիվ, այդ որոշումից հետո էլ ոստիկանության ծառայողների գործողություններում փոփոխություն չի արձանագրվել։ 2023 թ. դեկտեմբերի 9-ին ոստիկանության ծառայողները բռնի ուժի գործադրմամբ բերման են ենթարկել «Զանգ» շարժման անդամներին ու աջակիցներին և կրկին առգրավել վրանը՝ դրա տեղադրումը մեկնաբանելով որպես հասարակական կարգի խախտում։ Այդ օրը կարմիրբերետավորը (նկարը ստորև) նաև բռունցքով հարվածներ է հասցրել մասնակիցներից մեկի գլխին, երբ վերջինիս ձեռքերը բռնած են եղել այլ ոստիկաններ և բացարձակ չի եղել դիմադրություն։

Հատկանշական է, որ «Զանգ» շարժման ակցիաների մասնակիցները փոքրաթիվ էին, իսկ ոստիկանության կողմից 12-13 անձի բերման ենթարկելն ինքնաբերաբար նշանակում է հավաքի դադարեցում։ Այսինքն ոստիկանության ծառայողների գործողություններն ուղղված են եղել ոչ թե հավաքի ընթացքում անկարգության և/կամ հասարակական կարգի խախտումների կանխմանը, այլ հենց հավաքի դադարեցմանը։ Ոստիկանության՝ հավաքի անցկացումը թույլ չտալու մտադրության մասին է փաստում նաև 2023 թ. սեպտեմբերի 21-ին Մաշտոցի պուրակում պարզապես կանգնած «Զանգ» շարժման 10 անդամի բերման ենթարկելը՝ առանց որևէ իրավական հիմք ներկայացնելու։

ԱՌԱՆՑ ՏԱՐԲԵՐԱՆՇԱՆԻ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱԳՈՒՍՏՈՎ ԱՆՁԱՆՑ ՆԵՐԳՐԱՎՈՒՄԸ ՀԱՎԱՔՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Շարունակական բնույթ է կրում ոստիկանության կողմից քաղաքացիական հագուստով անձանց ներգրավումը հավաքներին, որոնք հրահանգներ են տալիս ոստիկանության ծառայողներին, մասնակցում են անձանց բերման ենթարկելու գործողություններին: Օրինակ՝ 2023 թ. օգոստոսի 18-ի կեսգիշերին Մաշտոցի պուրակից Վահագն Մինասյանին, «Քաղաքացու որոշում» կուսակցության գործադիր մարմնի անդամներ Սուրեն Սահակյանին, Հայկ Սահակյանին բերման ենթարկելու գործողությանը, ի թիվս ՀՀ փոխոստիկանապետի, մոտ 40 համազգեստով ոստիկանի, մասնկակցել է մոտ 10 քաղաքացիական հագուստով անձ:

2023 թ. դեկտեմբերի 5-ին Ալավերդի համայնքի ավագանու նիստի օրը (առավել մանրամասն տե՛ս «Ալավերդի համայնքի 2023 թ. դեկտեմբերի 5-ի նիստը և ոստիկանության գործողությունները» վերնագրի ներքո) Ալավերդու համայնքապետարանի դիմաց կարմիր բերետավորների կողմից քաղաքացիներին բերման ենթարկելու տեսագրության մեջ երևում է, որ ակցիայի մասնակիցներից մեկին բերման ենթարկողների թվում է նաև քաղաքացիական հագուստով անձ:

Նշենք, որ առանց տարբերանշանի ոստիկանության ծառայողների ծառայության իրականացումը և քաղաքացիական հագուստով անձանց գտնվելը հավաքների իրականացման վայրում հանդիսանում է օրենքի խախտում: Համաձայն «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի՝ հասարակական կարգի պահպանությունն ապահովելիս ոստիկանության ծառայողները պարտավոր են **կրել սահմանված ձևի համազգեստ, որի վրա տեսանելի մասում փակցվում են ոստիկանության ծառայողին անձնապես նույնականացնելու հնարավորություն տվող տարբերանշաններ**:

Անընդունելի է որպես ոստիկան հանդես եկողների տարբերանշաններ չկրելը: Առհասարակ հրապարակային միջոցառումների ժամանակ հասարակական կարգի պահպանմանը քաղաքացիական հագուստով անձանց ներգրավումը հակասում է ոստիկանության գործողությունների կանխատեսելիության և որոշակիության պահանջներին, որը անխուսափելիորեն մեծացնում է վատ վերաբերմունքի և

անպատժելիության ռիսկերը, վախի զգացում է առաջացնում հավաքի մասնակիցների մոտ իրենց կարծիքը հրապարակավ ներկայացնելու տեսակետից:

ԽՈՇՏԱՆԳՄԱՆ ԴԵՊՔԵՐԸ

2023 թ. ԶԼՄ-ով հրապարակվել է ոստիկանության բաժիններում անձանց խոշտանգման մի քանի դեպք:

- 2023 թ. հունվարի 12-ին Արման Խալապյանին հրավիրել են ՆԳՆ Կոտայքի մարզային վարչության Չարենցավանի բաժին՝ իբր իր որդու մասնակցությամբ տեղի ունեցած վիճաբանության կապակցությամբ պարզաբանումներ կատարելու: Բաժնի պետ Միհեր Մինասյանի աշխատասենյակ, որտեղ շուրջ 5 րոպե զրուցելուց հետո ներս են մտել ՆԳՆ աշխատակիցները, պետի ներկայությամբ Արման Խալապյանին խոշտանգել են, ապա ձերբակալել են:
- 2023 թ. մայիսի 13-ի լույս 14-ի գիշերը Ախուրյանի ոստիկանության բաժնում խոշտանգել են քաղաքացի Գ.Թ.-ին: Նա նշել է, որ Ախուրյանի ոստիկանության բաժնի 5 օպեր լիազորներ, որոնց կրկին տեսնելու դեպքում դեմքով կճանաչի, իրեն ծեծի են ենթարկել, անմարդկային վերաբերմունք ցույց տվել, մասնավորապես ձեռքերը ձեռնաշղթաներով կապած վիճակում գցել են գետնին, թքել վրան, հայհոյել:
- 2023 թ. հուլիսի 3-ին Սպիտակի բաժնի ծառայողի կողմից բռնության է ենթարկվել քաղաքացի Բորիս Մկրտչյանը: Ըստ տղայի մոր՝ Ոստիկանությունում բաժնի պետի տեղակալ Ասոյանն ասել է՝ «ես ու դու որ մենակ լինեինք, քեզ պատուհանից դուրս կգցեի»:
- 2023 թ. հուլիսի 7-ին ԱԱԾ-ում փաստական տվյալներ են ձեռք բերվել խոստովանություն ստանալու և արարքի համար պատժելու նպատակով ՀՀ ՆԳՆ ոստիկանության ծառայողների կողմից խմբի կազմում Երևան քաղաքի բնակիչ Գ. Բ.-ին խոշտանգելու առերևույթ հանցանքի դեպքի առթիվ:
- 2023 թ. հուլիսին ոստիկանության Հրազդանի բաժնում ՀՀ քաղաքացի Վ. Հայրապետյանի նկատմամբ իրականացվել է հոգեբանական ճնշում, մի քանի հոգով ծեծի են ենթարկել: Նրանք ներկայացել են որպես ոստիկանության Երևան քաղաքի վարչության քրեականի ներկայացուցիչներ, նրանց մեջ եղել է նաև Մինասյան ազգանունով անձ:
- 2023 թ. օգոստոսի 30-ին Շենգավիթի բաժնում պարեկների կողմից խոշտանգվել է Արայիկ Ավագյանը: «Ոստիկանության բաժին տեղափոխելուց հետո վստահորդիս նկատմամբ գործադրվել են հոգեբանական ու ֆիզիկական բռնություն, որի արդյունքում վստահորդս ստացել է բազմաթիվ վնասվածքներ: Նրան խոշտանգելու գործընթացը տևել է ավելի քան մեկ ժամ, որովհետև իմ՝ ոստիկանության վարչական շենք հասնելու պահին դեռևս շարունակվում էին այդ գործողությունները, և ինձ մոտավորապես կես ժամ չեն թույլատրել մուտք գործեմ ներս, տեսնեմ վստահորդիս: Կատարված բազմաթիվ ահազանգերից հետո նոր ոստիկանությունը որոշել է

թույլատրել իմ մուտքը Ոստիկանության վարչական շենք: Երբ արդեն ներս մտա, այնտեղ պարեկային ծառայության հատվածի միջանցքում պառկած անգիտակից վիճակում տեսա վստահորդիս: Նա գտնվում էր արնաշաղախ վիճակում, արնաշաղախ վիճակում էր գտնվում նաև այդ միջանցքի հատակն ամբողջությամբ: Դրանից արդեն հասկանալի էր, որ վստահորդիս նկատմամբ առանձնակի դաժանությամբ խոշտանգման դեպք է տեղի ունեցել»,- Aravot.am-ին ասել էր Ավագյանի ներկայացուցիչ Գևորգ Մխիթարյանը:

Այս դեպքերը համակարգում անպատժելիության և խոշտանգման, ինչպես նաև քաղաքացիների նկատմամբ վատ ու արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի դեպքերի ոչ պատշաճ քննության, մեղավորներին չպատժելու վառ դրսևորումներն ու հետևանքն են:

ԲՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

2023 թ. աննախադեպ էր **փաստաբանների նկատմամբ** ոստիկանության ծառայողների կողմից բռնություն կիրառելու առումով: ՀՔԱ Վանաձորի գրասենյակը ոստիկանության կողմից մարդու իրավունքների խախտման ԶԼՄ մշտադիտարկում է իրականացնում 2015 թ. -ից և կարող ենք փաստել, որ փաստաբանների նկատմամբ ոստիկանության բաժանմունքում բռնության դեպքեր այդ ընթացքում չեն արձանագրվել: 2023 թ.-ի առաջին կիսամյակում արձանագրվել է 3 փաստաբանի նկատմամբ բռնության դեպք:

2023 թ. փետրվարի 9-ին ոստիկանության ծառայողները ծեծի են ենթարկել փաստաբաններ Մարզպետ Ավագյանին ու Էմանուել Անանյանին: Դեպքը տեղի է ունեցել ոստիկանության Էրեբունու բաժնում, որտեղ փաստաբանները ներկայացնում էին իրենց անչափահաս պաշտպանյալի շահերը: Ավելին, փաստաբաններին ծեծի ենթարկելուց հետո ոստիկանության ծառայողները սպառնացել են նրանց, թե հաղորդում տալու դեպքում հաշվեհարդար կտեսնեն նրանց հետ:

2023 թ. հունիսի 7-ին Ոստիկանության Կենտրոնի բաժին բերման է ենթարկվել Գագիկ Բաբալարյանը՝ առանց իրավական հիմքեր ներկայացնելու: Նրա եղբայրը և փաստաբան Կարեն Ալավերդյանը նույնպես գնացել են բաժանմունք: Ըստ տեսագրության՝ փաստաբանին 5-7 րոպե թույլ չեն տվել տեսակցել իր պաշտպանյալին, մինչդեռ, ըստ օրենքի, նրան պետք է անհապաղ թույլատրեին: Երբ նա ի վերջո բարձրացել է սենյակ, որտեղ իր պաշտպանյալն էր, լսել է վերջինիս բղավոցները և իրեն չհարվածելու պահանջները: Սենյակ մտնելով՝ փաստաբանն ականատես է եղել, թե ինչպես են ոստիկանության 6 ծառայող հարվածում իր պաշտպանյալին, որը եղել է ձեռնաշղթայով ու հատակին: Փաստաբանին դուրս են հանել սենյակից՝ պահանջելով լքել բաժանմունքը, ինչից հետո խուզարկել են, գցել գետնին, ձեռնաշղթա հագցրել ու աչքերին ցողել աչքերն այրող նյութ (պղպեղային օդացրիչ)՝ պատճառելով սուր ցավ: Այդ նյութի կիրառումից մոտ 2 ժամ չի կարողացել բացել աչքերը:

Ծեծի ժամանակ պարեկներից ոչ մեկի հագուստին տեսախցիկ չի եղել: Փաստաբանի հարցին, թե ուր են հագուստին ամրակցվող սարքերը, խոշտանգման մասնակիցները պատասխանել են, թե դրանք լիցքավորվում են:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը հայտարարություն է տարածել՝ դատապարտելով փաստաբանների և անչափահասների նկատմամբ ոստիկանության ծառայողների գործողությունները և պատասխանատուների անգործությունը:

Փաստաբանների նկատմամբ ոստիկանության բաժանմունքներում բռնության դեպքերը խստորեն դատապարտել է Եվրոպայի փաստաբանների և իրավաբանների միությունների խորհուրդը:

Այսպիսով ևս մեկ անգամ արձանագրում ենք, որ ոստիկանական բաժանմունքներում շարունակում են խախտվել միջազգային կոնվենցիաներով երաշխավորված բացարձակ՝ վատ վերաբերմունքից զերծ մնալու իրավունքը: Այս դեպքն իր տեսակով հատում է թույլատրելի, առանց այն էլ գոյություն չունեցող, սահմանները, քանի որ այն դրսևորվել է հենց իրավունք պաշտպանող անձանց նկատմամբ:

ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐՈՒՄ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՀ Ոստիկանությունը 2023 թ. հայտարարել է **թմրամիջոցների դեմ պայքարի տարի**: Այդ պայքարի շրջանակներում, սակայն, Հայաստան ուղարկվող մեծ խմբաքանակի (3 տոննա) թմրամիջոցներն առգրավվել են ոչ թե Հայաստանի սահմանապահների ու ոստիկանության ծառայողների, այլ, օրինակ՝ Իտալիայի: Բացի դրանից՝ անպատասխան են մնում հարցեր, թե ինչ նպատակով է Հայաստան ներմուծվում այդ քանակի թմրանյութ, ինչ երաշխիքներ ուներ հնարավոր ստացողը, որ այդ քանակն անցնելու էր Հայաստանի սահմանով և տիրապետվելու էր:

Միևնույն ժամանակ ոստիկանության ծառայողները ռեյդեր են կազմակերպել ակումբներում՝ բիրտ ու անհամաչափ ուժի գործադրմամբ աշխատակիցներին և այցելուներին պառկեցրել հատակին, բիրտ ուժ ու բռնություն կիրառել որևէ դիմադրություն ցույց չտվող անձանց նկատմամբ, սպառնացել զենքով: Արդյունքում առգրավվել է ընդհանուր 1,95 գրամ քաշով «Մեթամֆետամին» և 5.87 գրամ հաստատուն քաշով «Մարիխուաննա» տեսակի թմրամիջոց:

2023 թ. երկու նման դեպք է արձանագրվել: Մասնավորապես՝ 2023 թ. ապրիլի 22-ին ոստիկանության ծառայողները ներխուժել են «Պոլիգրաֆ» ակումբ, իսկ հունիսի 23-ի լույս 24-ի գիշերը ապօրինի թմրանյութերի շրջանառության վերաբերյալ ստացված ահազանգով՝ «Բան» գիշերային ակումբ:

41 անձ առաջին դեպքում և 37 անձ երկրորդ դեպքում ոստիկանական բաժիններ են բերման ենթարկվել, որտեղ նրանք ենթարկվել են դաժան ծեծի և խուզարկվելու համար մերկացվել, նվաստացվել:

Ոստիկանության բաժիններ բերված անձանց գրառումները սոցցանցերում, ինչպես նաև հարցազրույցները ԶԼՄ-ներին փաստում են, որ բաժանմունքում անձանց ծաղրել են,

ստորացրել, անհրաժեշտ բժշկական օգնություն չեն ապահովել, ցուցաբերել են արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք: Հեռախոսները առգրավել են, զանգի իրավունք ոչ ոք չի ունեցել, փաստաբանների հետ մարդիկ կապվել են միայն ոստիկանությունից դուրս գալուց հետո: Բերման ենթարկվածներից մոտ 30-ը ռուսաստանցիներ են եղել, որոնց թարգմանիչ չի հատկացվել: Ականատեսները պատմել են՝. «…ռուսների հետ ահավոր զզվելի էին իրանց պահում: Մի աղջկա անընդհատ ձեռք էին գցում, ասում էին՝ չի կարելի ոտքը ոտքին գցել: Հայերեն էին ասում, ինքը բան չէր հասկանում: Բռնում էին էտ աղջկա ոտքը, որ իբր դզեն: Մի հատ դռեղներով տղու եմ հիշում՝ ահավոր սխկեցին»:

«Բան» ակումբ ռեյդի արդյունքում ձերբակալվել է Ռուսաստանի քաղաքացի Ելիզավետա Դանիլիչևան: Ըստ վերջինիս փաստաբանի՝ բացի զանգվածային բռնությունից և նվաստացումներից, պարեկները սուտ ցուցմունք են տվել ակումբում տեղի ունեցածի մասին, ինչը ապացուցվել է իրենց վրա ամրակցված տեսախցիկների տեսաձայնագրությունների ուսումնասիրմամբ: Փաստաբան Արտաշես Հովհաննիսյանը նշել է, որ սկզբնական փուլում հայերենին չտիրապետող կնոջը ապօրինաբար զրկել են պաշտպանից, իսկ տրամադրած թարգմանիչը պատշաճ որակավորում չի ունեցել:

«Պոլիգրաֆ» ակումբի դեպքից հետո մի շարք հասարակական կազմակերպություններ հանդես են եկել ոստիկանության բռնությունները դատապարտող հայտարարությամբ:

Նման մոտեցումը թմրամիջոցների ոլորտում պատժողական քաղաքականության դրսևորում է: Այս խնդրին և թմրամիջոցների ոլորտում պետության քաղաքականությանը ՀՔԱ Վանաձորի գրասենյակն անդրադարձել է՝ «Թմրամիջոցների գործածման, թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառության կանխարգելման ոլորտի քաղաքականության գնահատում» վերտառությամբ զեկույցում:

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԿԻՆ ՇԵՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

2023 թ. փետրվարի 16-ին՝ առավոտյան ժամը 8-ից հարյուրավոր ոստիկաններ ներս են մտել ՊՆ նախկին շենքում ապրող մարդկանց բնակարաններ, կոտրել դռները, շենքից դուրս հանել ծերերին, երեխաներին ու կանանց, իսկ տղամարդկանցից 22 հոգու ձերբակալել՝ «ոստիկանի օրինական պահանջը չկատարելու» հոդվածով: Այնուհետև ներս չեն թողել մտնել ո՛չ բնակիչներին՝ իրերը վերցնելու նպատակով, ո՛չ էլ լրագրողներին՝ ներսում կատարվողը լուսաբանելու նպատակով՝ պատճառաբանությամբ, որ «կյանքին վտանգ սպառնացող գործողություններ են կատարվում»:

Ըստ բնակիչների՝ շենքում բնակվում է 150-200 ընտանիք, մեծ մասն անապահով են, կան նաև պատերազմի մասնակիցներ, պայմանագրային զինծառայողներ, մի քանի ընտանիք՝ Արցախից: Առաջին բնակիչներն այդտեղ են հայտնվել 2022 թ. սեպտեմբերին:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը դատապարտել է բնակիչներին շենքից հանելու կառավարության որոշումը, ինչպես նաև ոստիկանության գործելաոճը, ուժի գործադրումը, մարդկանց ահաբեկումը և բախտի քմահաճույքին թողնելը, որի արդյունքում՝ բազմաթիվ առողջական, ֆինանսական, սոցիալական խնդիրների հետ մեկտեղ, բնակիչները դարձել են անօթևան:

ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ

Ոստիկանության կողմից մարդու իրավունքների խախտման դեպքերի ԶԼՄ մշտադիտարկման ժամանակահատվածում 2022 թ. առաջին անգամ է մեծ ծավալի բռնության դեպքեր արձանագրվել անչափահասների նկատմամբ: 10 օրվա ընթացքում բերման է ենթարկվել ավելի քան 15 անչափահաս: Եթե 2022 թ. արձանագրվել է անչափահասների նկատմամբ անհամաչափ ուժի կիրառման և բերման ենթարկելու դեպքեր հավաքների ընթացքում, ապա 2023 թ. ոստիկանության ծառայողների կողմից անչափահասների նկատմամբ բռնության դեպքեր են արձանագրվել նաև ոստիկանության բաժիններում:

2023 թ. սեպտեմբերի 25-ի առավոտյան ոստիկանության Քանաքեռ-Զեյթուն բաժին բերման էր ենթարկվել 14-ամյա անչափահաս: Այս մասին սոցիալական հարթակում գրել է փաստաբան Լուսինե Վիրաբյանը: Նա նաև նշել է. «Բերման ենթարկվելուց բացի՝ նաև ֆիզիկական բռնության է ենթարկվել ճանապարհին (հարվածներ գլխին):

Արձանագրվել է նաև անչափահասին խեղդելու հնարքով բերման ենթարկելու դեպք, որի վերաբերյալ լրագրողների պնդմանը ոստիկանապետ Արամ Հովհաննիսյանը պատասխանել է՝ «Դա ձեր երևակայությունն է, որ խեղդում էր:»

Աղբյուրը՝ aravot.am

Արձանագրվել է նաև անչափահասի կալանավորման դեպք: Անչափահասը բերման էր ենթարկվել 2023 թ. սեպտեմբերի 19-ին, իսկ հոկտեմբերի 29-ին նրան կալանավորելու որոշում է կայացվել:

Բռնության դեպքեր են արձանագրվել նաև ոստիկանության բաժիններում: Մասնավորապես՝ 2023 թ. փետրվարի 9-ին էրեբունու բաժնի օպերատիվ հետախուզության բաժնի աշխատակիցները բիրտ ուժի կիրառմամբ բերման են ենթարկել անչափահաս ուսանողների, ծեծի ենթարկել և խոշտանգել նրանց:

2023թ. հունիսի 1-ին հրապարակվել է Դիլիջանի ոստիկանության բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի պետ Արսեն Ղայթմազյանի կողմից 16-ամյա հյուրանոցի աշխատակցին ծեծելու նյութը: Դեպքը տեղի էր ունեցել հրապարակումից 1,5 ամիս առաջ: Տուժողը Արազ Ամիրյանն էր: 2023 թ. ապրիլի 10-ին Դիլիջանի ոստիկանության բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի պետը հարբած մոտեցել էր հյուրանոցում աշխատող երիտասարդին և հարցրել հյուրանոցի սենյակի մասին: Երբ լսել է, որ պետք է վճարի դրա համար, ծեծի է ենթարկել տղային: Բացի դեպքի անընդունելի լինելու հանգամանքից, մտահոգիչ ու խնդրահարույց է, որ իրավապահ համակարգը դեպքի մասին բարձրաձայնել և հայտարարություն է տարածել միայն տեսանյութը հրապարակվելուց հետո:

Քննչական կոմիտեն դեպքը տեղի ունենալուց մեկ ամիս հետո քրեական գործ է հարուցել ֆիզիկական ներգործության հոդվածով, անչափահաս տղային տուժող է ճանաչել: Բայց քանի որ բարձրաստիճան ոստիկանը զղջացել է, իսկ տղան էլ մարմնական վնասվածքներ չի ստացել, դատախազությունը որոշել է մեղադրանք չառաջադրել Դիլիջանի ոստիկանության բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի պետին «գործուն զղջալու հիմքով»: Եվ դեպքից միայն երկու ամիս անց՝ հունիսին, հանրային մեծ արձագանքից հետո դատախազը որոշել է քրեական հետապնդում հարուցել անչափահաս տղային հարվածներ հասցրած Դիլիջանի ոստիկանության բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի պետի նկատմամբ:

Դեպքի վերաբերյալ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ղեկավար Արթուր Սաքունցը հարցազրույց է տվել «Ազատությանը»՝ ընդգծելով, որ «Պետք է անթույլատրելի համարվի նման ոստիկանի գտնվելը ոստիկանության համակարգում», հակառակ դեպքում «գործ ունենք բռի և բռնի ուժի պարտադրանքի և այդ պարտադրանքը և այդ կիրառումը օրինականացնելու փաստի հետ»:

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՄԱՆ ԴԵՊՔԵՐԸ

Ոստիկանության ծառայողների ոչ իրավաչափ գործողություններից տուժել են նաև լրագրողները: 2023 թ. սեպտեմբերի 19-26-ը անհնազանդության ակցիաների ընթացքում ոստիկանության ծառայողները քաշքշել և հրել են լրագրողներին: 2023 թ. սեպտեմբերի 19-ին ոստիկանության կիրառած լուսաձայնային նռնակներից վնասվածք է ստացել Հետք Մեդիա Գործարանի լրագրող Անուշ Մկրտչյանը, որը լուսաբանում էր կառավարության առջև ընթացող բողոքի ակցիան: Ա. Մկրտչյանը բեկորային վնասվածք է ստացել, ինչի հետևանքով, ըստ բժիշկների, մակերեսային այրվածք է առաջացել:

Լրագրողների աշխատանքը խոչընդոտվել է նաև մայիսի 28-ին, երբ ոստիկանները փակել են Սարդարապատի հուշահամալիր տանող ճանապարհը և լրագրողներին թույլ չեն տվել բարձրանալ, քանի որ վարչապետ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ պատվիրակությունն այցելում էր Սարդարապատի հուշահամալիր: 2023 թ. սեպտեմբերի 24-ին արգելվել է նաև տեղական ու միջազգային լրագրողներին մոտենալ Կոռնիձորում գտնվող մարդասիրական կայանին:

2023 թ. սեպտեմբերի 15-ին Հայաստանի Ժուռնալիստների միությունը հայտարարություն է տարածել՝ ահազանգելով, որ վտանգված է լրագրող Անի Գևորգյանի կյանքը: Հայտարարության մեջ մասնավորապես նշվել է, որ իշխանական ուժի Երևանի ավագանու ցուցակը գլխավորող Տիգրան Ավինյանի նախընտրական ամփոփիչ քայլերթն ուղիղ եթերում լուսաբանող լրագրողի նկատմամբ ամենավայրի արշավն է տարվել: Չբավարարվելով հայհոյանքներով, անեծքներով, սադրանքներով ու վիրավորական արտահայտություններով՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության համակիրները բռնություն են կիրառել՝ շիշ նետելով ու դրոշի կոթով հարվածելով լրագրողին ու նրա հետ աշխատող օպերատորին՝ փորձելով ահաբեկել իրենց աշխատանքը կատարող ԶԼՄ ներկայացուցիչներին:

Նշենք, որ այդ միջադեպից առաջ Հայաստանի Ժուռնալիսների միությունը հանդես էր եկել հայտարարությամբ՝ դատապարտելով Newday.am կայքի հիմնադիր, լրագրող Անի Գևորգյանի դեմ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության համակիրների ու աջակիցների, ինչպես նաև առանձին պաշտոնատար անձանց կողմից հարձակումները, վիրավորանքները:

Արձանագրենք, որ իրավապահ համակարգի կողմից որևէ գործուն արձագանք այդ միջադեպերին չի հետևել: Այսինքն, ոստիկանության ծառայողները դրսևորել են ակնհայտ անգործություն՝ ոչ միայն չերաշխավորելով լրագրողների մասնագիտական գործունեության կատարման հնարավորությունը, այլև չեն արձագանքել անձի նկատմամբ վիրավորանք, բռնություն կիրառելու ահազանգին:

Ոստիկանության ծառայողները նաև խոչընդոտել են լրագրողների մասնագիտական աշխատանքը Ալավերդի համայնքում դեկտեմբերի 5-ի նիստի օրը՝ թույլ չտալով հարցեր ուղղել ավագանու անդամներին ու Քաղաքացիական պայմանագիր (այսուհետ՝ ՔՊ) խմբակցության պատգամավոր Արեն Մկրտչյանին:

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԸ ԵՎ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊՕՐԻՆԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2023 թ. դեկտեմբերի 5-ին Ալավերդի համայնքում գումարվեց համայնքի ղեկավար Արկադի Թամազյանին անվստահություն հայտնելու օրակարգով ավագանու նիստ: Նիստին ներկա էր նաև ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Արեն Մկրտչյանը, որը 2022 թ. սեպտեմբերին ՔՊ կուսակցության կողմից համայնքի ղեկավարի թեկնածուն էր: Զուգահեռ

Ալավերդու համայնքապետարանի մոտ Արկադի Թամազյանի աջակիցները խաղաղ հավաք էին իրականացնում՝ բողոքելով համայնքի գործող ղեկավարին անվստահություն հայտնելու դեմ։

Ուշագրավ է այս գործընթացում Ոստիկանության մասնակցությունը։ Մասնավորապես՝ ոստիկանության ծառայողները և փրկարար ծառայության ներկայացուցիչները կոտրել են Ալավերդու համայնքապետարանի նիստերի դահլիճի դուռը և կանգնելով նիստերի դահլիճի դռան առջև՝ թույլ չեն տվել համայնքի ղեկավարի՝ Արկադի Թամազյանի և ավագանու մի շարք անդամների մուտքը դահլիճ։ Կարմիրբերետավորներն իրենց գործողությունները մեկնաբանում են որպես ՔՊ ավագանու անդամների անվտանգության ապահովում։

Ավագանու նիստից հետո կարմիրբերետավորները սկսել են բերման ենթարկել համայնքապետարանի մոտ խաղաղ ակցիա իրականացնող քաղաքացիներին՝ ներգրավելով նաև քաղաքացիական հագուստով անձանց։

ՄԱՍՆԱՎՈՐ ԿՅԱՆՔԻ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Պաշտպանի աշխատակազմի կողմից իրականացվող մշտադիտարկմամբ արձանագրվել է, որ իրավապահ մարմինների կողմից կատարված առանձին հրապարակումներում ուղղակիորեն մատնանշվում են ենթադրյալ հանցանքների կատարման մեջ կասկածվող անձանց նույնականացնող տվյալներ՝ սոցիալական ցանցերում վերջիններիս օգտահաշիվների տվյալները, անունը, ազգանունը և այլ անձնական տվյալներ, իսկ որոշ դեպքերում նաև՝ անձանց լուսանկարները։

Մեկ այլ դեպքում պարեկները ՄԻԱՎ ունեցող տղամարդու պայուսակում հակառետրովիրուսային դեղեր են հայտնաբերել, չեն հավատացել, որ դրանք նախատեսված են ՄԻԱՎ-ի բուժման համար և թմրանյութեր պահելու կասկածանքով բերման են ենթարկել Կենտրոնի բաժին։ Բաժնում նրան ծաղրել են, նվաստացրել, ՄԻԱՎ-ի մասին պատմել են բոլոր ծառայակիցներին (ընթացքում ՄԻԱՎ-ը շփոթել են ՁԻԱՀ-ի հետ), առանց թույլտվության պատասխանել են նրա հեռախոսազանգերին, ՄԻԱՎ դրական կարգավիճակը բացահայտել նաև ընտանիքի անդամներին։

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՉ ՄԻԱՏԵՍԱԿ, ԱՆԿԱՆԽԱՏԵՍԵԼԻ ՎԱՐՔԱԳԻԾԸ

2023 թ. հուլիսի 3-ին «Անգլիական» այգու տարածքից ոստիկանության ծառայողները բերման են ենթարկել մի երիտասարդի, որը, փաստաբան Արայիկ Պապիկյանի խոսքերով, ի սկզբանե մոտեցել էր վարչապետին ու ասել՝ պատասխան ես տալու իմ զոհված ընկերոջ և մեր տղաների համար։ Երբ ոստիկանները նրան ասֆալտին են փռել, նա Փաշինյանին անվանել է «դավաճան» և «վիժվածք»։ Երիտասարդին, ըստ նրա, առանց կարգավիճակի մի քանի օր պահել են Ձերբակալվածների պահման վայրում։ Քրեական գործը փաստաբանն

ամբողջությամբ անհիմն է որակել։ Փաստաբանը հիշեցրել է՝ «դավաճան» և «վիժվածք» բառերը հայհոյանք չեն համարվում, դրանք կարող են դիտարկվել որպես վիրավորանք, իսկ վիրավորանքը Հայաստանում վաղուց ապաքրեականացվել է։ Հատկանշական է, որ դատարանը երիտասարդի 72 ժամյա ձերբակալումը ճանաչել է անօրինական։

Միևնույն ժամանակ, «Նեմեսիս» գործողության հերոսների հուշարձանի բացման արարողությանը Երևանի փոխքաղաքապետի պաշտոնը զբաղեցնող Տիգրան Ավինյանի ելույթի ընթացքում ներկաներից մի քանիսը սկսել են վանկարկել «դավաճան» և դա որևէ հետևանք չի ունեցել:

Այսինքն, կարող ենք եզրակացնել, որ ոստիկանության ծառայողներն իրենց գործառույթների հիմքում տեսնում են ոչ թե խախտումը, այլ, թե ով է ենթադրյալ խախտման թիրախը, ինչը հակասում է օրինականության, անձի իրավունքների և ազատությունների, պատիվն ու արժանապատվությունը հարգելու, մարդասիրության ու հրապարակայնության սկզբունքներին, որոնք ամրագրված են «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքով։

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ԴԵՊՔԵՐԸ

Ինչպես և նախորդ տարի, 2023 թ. ևս արձանագրվել են ոստիկանության ծառայողների կողմից օտարերկրացիների իրավունքների խախտման դեպքեր։ Նշենք, որ Անկախ պետությունների համագործակցության երկրների հետ իրավական աջակցության վերաբերյալ միջպետական համաձայնագրերը հակասում են Հայաստանի՝ մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիաներով ստանձնած պարտավորություններին։ Ըստ այդմ, այդ համաձայնագրերը պետք է վերանայվեն։

2023 թ. մայիսին Հայաստանում բերման են ենթարկել Ռուսաստանի ՆԳՆ-ի կողմից հետախուզման հայտարարված՝ Կիրովից փախած Մարիա Ռոուզին ու նրա մանկահասակ որդուն։ Կինը հետախուզման էր հայտարարվել Ուկրաինայի դեմ պատերազմում Ռուսաստանի գործողությունները քննադատող հրապարակումների համար։ Մարիան և նրա 7-ամյա տղան ոստիկանական բաժանմունքում են գտնվել 5 ժամ։ Ռոուզի աջակիցների փոխանցմամբ, հայ ոստիկանները «ակնարկում էին դատի և հնարավոր արտահանձնման մասին»։ Երբ փաստաբանները հասել են պաշտպանյալներին, բաժանմունքում արդեն քննարկելիս են եղել երեխայի խնամքի՝ մասնավորապես «Զատիկ» մանկատուն տեղափոխելու հարցը։ Կիրով քաղաքից փախած Մարիա Ռոուզի ու նրա մանկահասակ որդու բերման ենթարկելը հիմքեր չուներ։

2023 թ. հուլիսի 18-ի կեսգիշերին «Զվարթնոց» օդանավակայանում ձերբակալել են Ռուսաստանի քաղաքացի Իրինա Բելաչեուին։ «Երևան ժամանելուն պես մորս անձնագրում մուտքի կնիք դրեցին… և անմիջապես հայտնեցին, որ ՌԴ-ում իր դեմ քրեական գործ է հարուցվել, ինչը նշանակում է, որ նա չի կարող օդանավակայանից ներս անցնել, այսինքն՝ մտնել Հայաստան։ Հետո ես ու մայրս մի քանի ժամ անցկացրինք ոստիկանական բաժանմունքում։ Ամենայն հավանականությամբ նրան չեն հանձնի Ռուսաստանին։ Ոստիկանները գրեթե երդվում էին, որ չեն արտահանձնի, բայց դա փաստարկ չէ», –

սոցիալական հարթակում գրել էր Նիկոլայենկոն: ՀՔԱ Վանաձորի գրասենյակն ահազանգել էր՝ «ՌԴ կողմից հետախուզվող քաղաքացիներին ձերբակալելու իրավական ընթացակարգեր Հայաստանում չկա՛ն, Հայաստանը հերթական անգամ ի կատար է ածում Ռուսաստանի ապօրինի պահանջը՝ ձերբակալել նրանց և գտնվելու վայրի մասին զեկուցել Ռուսաստանի իրավապահ մարմիններին, Իրինա Բելաչեուի նկատմամբ հետապնդումը ապօրինի է»: Ռուս-ուկրաինական պատերազմից հետո Ռուսաստանի կողմից հետախուզվող 10-ից ավել քաղաքացի է այս խնդրով դիմել ՀՔԱ Վանաձորի գրասենյակ: Նրանց մի մասը, ինչպես Բելաչեուն, ձերբակալվել և ազատ է արձակվել, մյուս մասին փորձել են ձերբակալել: Բոլոր դեպքերում գործընթացը կանգ է առել՝ հստակ հիմքերի բացակայության պատճառով:

2023 թ. նոյեմբերին բարեկամների հաղորդման հիման վրա ոստիկանությունը ձերբակալել էր Ինգուշեթիայից եկած 21-ամյա Ֆաթիմա Զուրաբովային, որը փախել էր ընտանեկան բռնությունից: Ոստիկանական բաժնում ընտանեկան բռնությունից փախած կնոջը իր կամքին հակառակ փակել են նրա հետևից եկած հորեղբոր՝ Յուսուպի և հորեղբոր ընկերոջ հետ միևնույն սենյակում: Այդ ընթացքում ոստիկանները բացել են Ֆաթիմայի բջջային հեռախոսը, կրկնօրինակել սարքի պարունակությունը: Ոստիկանությունը հրաժարվել է ընթացք տալ ընտանեկան բռնության և Հայաստան ժամանած բարեկամների սպառնալիքների մասին հաղորդմանը:

2023 թ. հոկտեմբերին Ճապոնիայի մի քաղաքացի ոստիկանության կենտրոնական բաժնում հայտնել է, որ իր պայուսակը գողացել են: Բաժնի աշխատողներն ասել են, որ հաղորդում չեն կարող վերցնել, քանի որ թարգմանիչ (նույնիսկ անգլերենի) չունեն ու չեն կարող կանչել: Հաղորդում չի չընդունվել, նույնիսկ, երբ անձը ներկայացել է թարգմանչի հետ:

ՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Պարեկային ծառայությունը, որը փոխարինում է նախկինում գործող Պարեկապահակային ծառայությանը և Ճանապարհային ոստիկանությանը, ստեղծվել է 2020 թ.-ին: Երևանում այն սկսել է գործել 2021 թ. հուլիսից, Շիրակի և Լոռու մարզերում՝ 2022 թ. ապրիլից:

2021-2022 թթ. ընթացքում պարեկների կողմից մարդու իրավունքների խախտման դեպքեր չեն արձանագրվել: 2023 թ.-ին, բացի ոստիկանության այլ ստորաբաժանումների ծառայողների հետ անձանց նկատմամբ խոշտանգման, բռնություն գործադրելու դեպքերի, արձանագրվել է 6 դեպք, երբ պարեկները կանգնեցրել են մեքենան և անհարգալից են խոսել վարորդների հետ, նրանց նկատմամբ ֆիզիկական ուժ և բռնություն են կիրառել, հայհոյանքներ հնչեցրել: Մեկ դեպքում էլ պարեկներն անհարգալից են խոսել այգում նստարանին նստած ՀՀ քաղաքացու հետ:

2023 թ. փետրվարի 13-ին պարեկային ծառայության աշխատակիցները Գյումրիում մեքենան կայանելու հարցի շուրջ քաշքշել են հաշմանդամություն ունեցող քաղաքացուն:

2023 թ. մարտի 14-ին Նոր Նորքի այգում պարեկների կողմից խուզարկվել է Ազգային ժողովրդավարական բևեռ շարժման անդամ Նինա Ղանդիլյանը: Տեսագրությունում երևում են կնոջ շուրջը հավաքված 5 պարեկները: Պարեկներն անհարգալից են խոսել ՀՀ քաղաքացու հետ, ձայն բարձրացրել, դիմել «ընկերուհի», «տիկին» դիմելաձևով, ուղղորդել, թե ում և ինչ նկարի:

2023 թ. մարտի 26-ին Վանաձոր-Երևան ավտոճանապարհին՝ Սպիտակ բնակավայրում, ոստիկանների կողմից ստուգման նպատակով կանգնեցվելու հրահանգ է տրվել ավտոմեքենայի վարորդին: Ըստ ՀՀ քաղաքացի Վարդուհի Անանյանի՝ մոտեցել էր փողոցային պահվածքով և ոստիկանի համազգեստով մի անձ և հայհոյանքներով դիմել ամուսնուն՝ պահանջելով իջնել մեքենայից «Հլա իջի՛ մեքենայից, արա՛» արտահայտությամբ: Ոստիկաններից ոչ ոք չի ներկայացել, բացի պարեկային ծառայություն իրականացնողներից մեկից: Ըստ քաղաքացու՝ պարեկները նաև փորձել են տեղեկություն հավաքել անձի մասին՝ փորձելով կանխել քաղաքացու կողմից բողոք ներկայացնելը:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը խստորեն դատապարտել է պարեկային ծառայության գործելաոճը Լոռու մարզում՝ նշելով, ի թիվս այլնի, որ թեև խոստացված ռեֆորմներին և մարդակենտրոն պարեկային ծառայություն ունենալու խոստմանը, բազմաթիվ են բողոքները և դժգոհությունները պարեկների վարքի և ոչ պրոֆեսիոնալ գործելաոճի վերաբերյալ:

2023 թ. հունիսի 27-ին պարեկային ծառայողները բիրտ ուժ են կիրառել կին վարորդի նկատմամբ և ձեռնաշղթայել նրան, ում անհիմն կանգնեցրել են ամրակապված չլինելու պատրվակով:

2023 թ. սեպտեմբերի 3-ին գյումրեցի ընդդիմադիր գործիչ Կարապետ Պողոսյանը իր ֆեյսբուքյան էջում տեսանյութ է հրապարակել, որտեղ պարեկները տաքսու վարորդին կանգնեցնում են ծխելու համար, սակայն տուգանում ամրագոտի չկապելու համար: Տեսանյութում պարեկներն իր իրավունքները պաշտպանող քաղաքացու հասցեին հայհոյանքներ են հնչեցրել: Հայհոյանքներն ուղղված են եղել նաև բոլոր գյումրեցիներին: Նրանք հայհոյախառն սպառնալիքներ են հնչեցրել նաև բոլոր տաքսու վարորդների հասցեին:

2023 թ. նոյեմբերի 15-ին Գյումրու Վարդանանց հրապարակում պարեկային ծառայողը կանգնեցրել է Գոռ Թորոսյանի մեքենան և տուգանել նրա համար, որ առջևի նստարանին մեծահասակի հետ նստած է եղել նաև երեխա: Վարորդը համաձայնվել էր, որ խախտում է կատարել և չի առարկել վարչական ակտի դեմ, սակայն, երբ նստել են մեքենաները, որ հեռանան, նկատել է, որ պարեկային ծառայողը նույնպես խախտում է թույլ տալիս. մեքենան վարելիս խոսում է հեռախոսով և ամրակապված չէ: Գոռ Թորոսյանը գնացել է պարեկային ավտոմեքենայի հետևից, կանգնեցրել այն, պնդել, որ պարեկը նույնպես օրենք է խախտել: Խոսակցությունը վերածվել է բանավեճի, ինչից հետո, ինչպես երևում է տարածված տեսանյութում, պարեկը հարվածել է Թորոսյանին, ոլորել ձեռքերը: Ըստ Թորոսյանի՝ ինքը վնասվածքներ է ստացել:

2023 թ. դեկտեմբերի 4-ին Գյումրեցի հանրային գործիչ Կարապետ Պողոսյանն իր ֆեյսբուքյան էջում հրապարակել է տեսանյութ, որում պարեկները Լոռու մարզում ծեծում և հայհոյում են բերման ենթարկվող քաղաքացուն:

2023 Թ. ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ԴԵՊՔԵՐԻ ԹՎԱՅԻՆ ԱՄՓՈՓՈՒՄ

2023 թ. ընթացքում ԶԼՄ-ների հրապարակումների հիման վրա արձանագրվել է ոստիկանության կողմից մարդու իրավունքների խախտման **112 դեպք**: 2022 թ. ընթացքում դեպքերի թիվը **199** էր:

2021 թ. արձանագրվել է ոստիկանության ծառայողների կողմից մարդու իրավունքների խախտման 159 դեպք, 2020 թ.՝ **192 դեպք**, *2019 թ.* ՝***90 դեպք***, *2018 թ.* ՝***181 դեպք***, *2017 թ.* ՝***107 դեպք***, *2016 թ.* ՝ ***338 դեպք***, *2015 թ.* ՝***304 դեպք*** (տե՛ս Գծապատկեր 1):

Գծապատկեր 1. Ոստիկանության ծառայողների կողմից մարդու իրավունքների խախտման ընդհանուր թիվը ըստ ԶԼՄ-ների հրապարակումների դիտարկման արդյունքների 2015-2023 թթ.



2023 թ. արձանագրվել է հավաքների ժամանակ կամ հավաքներին մասնակցելու հետևանքով ոստիկանության ծառայողների կողմից մարդու իրավունքների խախտման **61 դեպք** կամ դեպքերի **54.5 %-ը** (*տե՛ս Գծապատկեր 2*):

2023 թ. ԶԼՄ-ներով արձանագրվել է անհատական բնույթի խախտման **51 դեպք** կամ դեպքերի **45.5 %-ը** (*տե՛ս Գծապատկեր 2*):

Գծապատկեր 2. Ոստիկանության ծառայողների կողմից մարդու իրավունքների խախտման դեպքերը (հավաքների կամ հավաքներին մասնակցելու արդյունքում արձանագրված իրավունքների խախտման դեպքեր, անհատական դեպքեր և ընտրությունների համատեքստում խախտումների դեպքեր) 2015-2023 թթ.





Հատկանշական է, որ տոկոսային հարաբերակցությամբ, 2023 թ. անհատական բնույթի խախտումներն ամենաբարձրն են 2020-2023 թթ. ընթացքում, այն դեպքում, երբ 2020 թ. հայտարարվեց ոստիկանության բարեփոխման մասին, ընդունվեց ռազմավարություն և գործողությունների ծրագիր: Ընդ որում, նախորդ տարվա համեմատ, դեպքերի թիվն աճել է 36 %-ով (*տե՛ս Գծապատկեր 3*):

Գծապատկեր 3. Ոստիկանության ծառայողների կողմից մարդու իրավունքների խախտման անհատական դեպքերի համամասնությունը ընդհանուր խախտումների նկատմամբ 2020-2023 թթ.



Նշենք, որ եթե հավաքների ժամանակ ոստիկանության ծառայողների գործողությունները հնարավոր է նույնականացնել ՁԼՄ-ների լայն լուսաբանման շնորհիվ, ապա անհատական բնույթի խախտման դեպքերով լուսաբանումը գրեթե բացակայում է: ՁԼՄ-ներով հրապարակվում են լայն հնչեղություն ստացած դեպքերը:

2023 թ. ընթացքում խախտվել են մարդու հետևյալ 15 իրավունքները (*տե՛ս Գծապատկեր 4*)՝

Գծապատկեր 4. 2023 թ. խախտված իրավունքները



2023 թ. առավել մեծ թվով խախտվել է անձի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքը (65 դեպք կամ դեպքերի 58 %): Հավաքների ընթացքում անձի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքը խախտվել է 44 դեպքում

(72 %), անհատական բնույթի դեպքերում 21 դեպքում (41 %)։ Ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունքը խախտվել է 57 դեպքում (ընդհանուր դեպքերի 51 %)։ Խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունքը խախտվել է 55 դեպքում (ընդհանուր դեպքերի 48.2 %)։ Նախորդ տարիներին նշյալ իրավունքների խախտման դեպքերի թվերը ներկայացված են ստորև

Աղյուսակ 1. ՀՀ ոստիկանության կողմից անձի ազատության և անձնական անձեռնմխելիության, ֆիզիկական բռնությունից զերծ մնալու, խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունքների խախտման թվային տվյալները 2015-2023 թթ.

Տարեթիվ	**Անձի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք**		**Ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունք**		**Խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունք**	
	Դեպք	**Տոկոս**	**Դեպք**	**Տոկոս**	**Դեպք**	**Տոկոս**
2023 թ.	65	58	57	51	55	48.2
2022 թ.	146	73.7	124	62.6	155	78.3
2021 թ.	85	53.5	68	42.8	83	52.2
2020 թ.	111	57.8	84	43.8	101	52.6
2019 թ.	44	48.8	41	45.5	29	32.2
2018 թ.	76	42	84	46.4	81	44.8
2017 թ.	16	15	62	49.1	17	44.8
2016 թ.	157	46.4	141	41.7	121	35.8
2015 թ.	70	23	37	12.2	96	31.6

Դեպքերի գերակշիռ մասը, ավանդաբար, գրանցվել է Երևանում (94 դեպք, ընդհանուր դեպքերի 84 %-ը)։

Գծապատկեր 5. Ոստիկանության ծառայողների կողմից մարդու իրավունքների խախտումները Երևանում և մարզերում



2023 թ. Ոստիկանության կողմից մարդու իրավունքների խախտմանը հանգեցրած անհատական բնույթի դեպքերի ամփոփում

2023 թ. ԶԼՄ-ների հրապարակումներով արձանագրվել է ոստիկանության ծառայողների կողմից մարդու իրավունքների խախտմանը հանգեցրած 51 անհատական բնույթի դեպք, ինչը կազմում է ոստիկանության կողմից մարդու իրավունքների խախտումների ընդհանուր թվի **45.5 %-ը**: Մասնավորապես խախտվել են հետևյալ իրավունքները՝

- ֆիզիկական բռնությունից զերծ մնալու՝ 27 դեպք (կամ դեպքերի **53 %**),
- անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու՝ 22 դեպք
- ազատության և անձնական անձեռնմխելիության՝ 21 դեպք,
- արդար դատաքննության՝ 7 դեպք,
- իրավաբանական օգնություն ստանալու՝ 6 դեպք,
- առողջության՝ 6 դեպք,
- խտրականությունից զերծ մնալու՝ 5 դեպք,
- սեփականության՝ 4 դեպք,
- խոսքի ազատության՝ 3 դեպք,
- մասնավոր կյանքի անձեռնմխելիության՝ 3 դեպք
- ազատ տեղաշարժվելու՝ 3 դեպք,
- կարծիքն ազատ արտահայտելու՝ 2 դեպք,
- լրագրողի՝ մասնագիտական օրինական գործունեություն իրականացնելու՝ 4 դեպք:

Անհատական բնույթի 51 դեպքերից 38-ը (74.5 %-ը) տեղի են ունեցել քաղաք Երևանում, 5-ը՝ Լոռու, 4-ը՝ Շիրակի, երկու դեպք՝ Կոտայքի և մեկական դեպք՝ Տավուշի և Սյունիքի մարզերում:

Հաշվետու ժամանակահատվածում գրանցված դեպքերը՝ ըստ խախտված իրավունքի առավել մանրամասն հասանելի են [հետևյալ հղմամբ](#):

2023 թ. հավաքների ընթացքում կամ դրանց մասնակցելու հետեվանքով Ոստիկանության կողմից մարդու իրավունքների խախտմանը հանգեցրած դեպքերի ամփոփում

2023 թ. հավաքների և բողոքի ցույցերի ընթացքում արձանագրվել է ոստիկանության գործողությունների հետևանքով մարդու իրավունքների խախտման 61 դեպք՝ ընդհանուր խախտումների թվի **54.5 %-ը**: Մասնավորապես խախտվել են հետևյալ իրավունքները՝

- խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու՝ 55 դեպք (90 %),
- անձի ազատության և անձնական անձեռնմխելիության՝ 44 դեպք (72 %),
- ֆիզիկական բռնությունից զերծ մնալու՝ 30 դեպք (49 %),
- առողջության՝ 6 դեպք (9.8 %),

Խախտվել են նաև իրավաբանական օգնություն ստանալու, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու, սեփականության, խոսքի ազատության և կարծիքն ազատորեն արտահայտելու իրավունքները: 4 դեպքում խոչընդոտվել է լրագրողի մասնագիտական օրինական գործունեությունը:

61 դեպքերից 56-ը (91.8 %-ը) գրանցվել են Երևանում, 3 դեպք՝ Լոռու, մեկական դեպք Արարատի և Շիրակի մարզերում:

Հաշվետու ժամանակահատվածում գրանցված դեպքերը՝ ըստ խախտված իրավունքի առավել մանրամասն հասանելի են հետևյալ հղմամբ:

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՀՀ ՆԳՆ ՆԵՐՔԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ և ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆ ԱՌ ՆՈՅԵՄԲԵՐԻ 9, 2023 Թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԳՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ք.Երևան, Նալբանդյան 57, հեռ. (ֆաքս) 011.52-93-38

«08» 11. 2023թ.
№ 20/28/135002-23

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ կազմակերպության նախագահ

Արթուր Սաքունցին

hcav@hcav.am

Հարգելի՛ պարոն Սաքունց,

Ի պատասխան Ձեր 2023թ. նոյեմբերի 7-ի թիվ Ե/2023-07.11/752 գրությանը՝ տեղեկացնում եմ, որ լրատվական կայքէջերում նշված հրապարակումների կապակցությամբ ՀՀ ՆԳՆ ոստիկանության ներքին անվտանգության վարչությունում իրականացվում է ծառայողական քննություն, ուստի ոստիկանության ծառայողներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցին անդրադարձ կնատարվի ծառայողական քննության վերջնական արդյունքներով:

Հարգանքով՝

Պետ,
ոստիկանության գնդապետ՝ *Վ.Մարտիրոսյան*

կապ.Ա.Շահինյան
հեռ.010-59-63-36

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ք.Երևան, Նալբանդյան 57, հեռ. (ֆաքս) 011.52-93-38

«08» 12. 2023թ.
№ 20/28/1485.56-23

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի
Վանաձորի գրասենյակ կազմակերպության
նախագահ

Արթուր Սաքունցին

hcav@hcav.am

Հարգելի՛ պարոն Սաքունց,

Ի լրումն ՀՀ ՆԳՆ ներքին անվտանգության և հակակոռուպցիոն վարչության 2023թ. նոյեմբերի 9-ի թիվ 20/28/135007.23 գրությանը՝ տեղեկացնում եմ, որ լրատվական կայքէջերում նշված հրապարակումների կապակցությամբ հիշյալ վարչությունում իրականացվող ծառայողական քննության ընթացքը երկարաձգվել է ևս 30 օրով:

Արդյունքների մասին կհայտնվի լրացուցիչ:

Հարգանքով՝

Պետի տեղակալ,
ոստիկանության գնդապետ՝ Վ.Հարությունյան

կատ.Ա.Շահինյան
հեռ.010-59-63-36

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ք.Երևան, Նալբանդյան 57, հեռ. (ֆաքս) 011.52-93-38

«16» 01. 24թ.
№ 28/24

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ կազմակերպության նախագահ

Արթուր Սաքունցին

hcav@hcav.am

Հարգելի՛ պարոն Սաքունց,

Ի լրումն ՀՀ ՆԳՆ ներքին անվտանգության և հակակոռուպցիոն վարչության 2023թ. դեկտեմբերի 8-ի թիվ 20/28/148596-23 գրությանը՝ տեղեկացնում եմ, որ Ձեր կողմից ներկայացված լրատվական կայքէջերում նշված հրապարակումների կապակցությամբ հիշյալ վարչությունում իրականացված ծառայողական քննության արդյունքներով ձեռք բերված փաստաթղթերն ուղարկվել են ՀՀ գլխավոր դատախազություն, դրա ընթացքը կասեցվել է և որոշվել է դրան անդրադառնալ հիշյալ դեպքով իրավական գնահատականի վերջնական արդյունքներով:

Արդյունքների մասին կհայտնվի լրացուցիչ:

Հարգանքով՝

Պետ,
ոստիկանության գնդապետ՝ *Վ.Մարտիրոսյան*

կապ.Ա.Շահինյան
հեռ.010-59-63-36